Ազգ

Azg
armenian daily

Ապրիլ 3 Շաբաթ 1993

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Գ տարի, թիվ 61 (312)
գինը 5ռ.
դասիչ 69149
Երևան 375010
Հանրապետության 47
հեռ. 581841, ֆաքս 562941
տելեքս 243266 CPIRI SU

ԱՄՆ

Կոնգրեսականներից նամակ պետքարտուղարին

Ապրիլի 1-ին ԱՄՆ Կոնգրեսի մի խումբ անդամներ, գլխավորությամբ ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Լի Համիլթընի եւ նույն պալատում դեմոկրատական կուսակցության խոսնակ Դեյվիդ Բոնիորի, անսովոր խիստ ոճով նամակ են հղել Ս. Նահանգների պետքարտուղար Ուորրեն Քրիստոֆերին, պահանջելով, որ վարչությունը ճնշում գործադրի Ադրբեջանի վրա վերացնելու Հայաստանի տնտեսական շրջափակումը, միաժամանակ Թուրքիայից պահանջելով տարանցիկ հուսալի ճանապարհ տալ դեպի Հայաստան բեռներին: Նամակագիրներն ԱՄՆ կառավարությունից պահանջում են նաեւ կազմակերպել մարդասիրական բեռների առաքումը Հայաստան եւ «միջազգային ճնշում բանեցնել» հրադադար հաստատելու համար Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ: «Ազգ»

Խմբագրական

Տարածքներ շրջափակման դիմաց

Հասկանալի են պատճառները, թե Քելբաջարի ռազմական գործողություններին մասնակցում են նաեւ Հայաստանի զինված ուժերը: Վերջին տարիների ընթացքում որքան էլ Հայաստանը ջանում է Ադրբեջանի հետ լայնածավալ պատերազմի մեջ չմտնել, այնուամենայնիվ Ադրբեջանն ինքը պատերազմում է ոչ միայն Ղարաբաղի, այլեւ Հայաստանի դեմ՝ ձեռնարկելով ինչպես անմիջական ռազմական գործողություններ (Արծվաբերդի գրավումը), այնպես էլ այլ ձեւեր՝ Հայաստանի լիակատար շրջափակումը եւ այլն, մինչեւ անգամ այդ նպատակներով օգտագործելով երրորդ պետության տարածքը: Եւ այս ամենը կատարվում է այնքան բացահայտ, որ էլչիբեյը պատեհապես հայտարարում է, թե Ադրբեջանն ի վիճակի չէ պատերազմով հաղթել Հայաստանին, ուստի նրա միակ, վճռական զենքը մնում է շրջափակումը: Պարզ տրամաբանությունը հուշում է, որ եթե Ադրբեջանը ջանում է շրջափակումների միջոցով ծնկի բերել Հայաստանին եւ դրա շնորհիվ Ղարաբաղի հարցում զիջումներ կորզել, Հայաստանն էլ պետք է իր հերթին ջանա խուսափել դրանից՝ ճեղքելով շրջափակումը: Բայց որքան էլ զարմանալի է, Հայաստանը վերջին տարիների ընթացքում լիակատար շրջափակումը ճեղքելու ուղղությամբ որեւէ գործնական քայլ չի կատարել, թեեւ դրա համար բոլոր հիմքերն ուներ, եւ բավարարվել է միայն միջազգային ատյաններին բողոքելով: Մինչդեռ այդ շրջափակումները Հայաստանին անհամեմատ ավելի ծանր հարված են հասցնում, քան տարածքային կորուստներն Ադրբեջանին: Հաղթանա՞կ է արդյոք Քելբաջարի շրջանի գրավումը: Անշուշտ: Ռազմական առումով դա հաղթանակ է, ու թեեւ Հայաստանի զինված ուժերը ձեռնպահ են մնացել դրան մասնակցելուց, այնուամենայնիվ դա նաեւ Հայաստանի հաղթանակն է:

Բայց եթե նժարների վրա դնելու լինենք մի կողմից Հայաստանի՝ շրջափակումների հետեւանքով ֆլյուկտուացվող տնտեսությունը, գիտությունը, մշակույթը եւ այլն, մյուս կողմից գրեթե ամայի եւ բնակության համար բավականին անհարմար տարածքների գրավումը, կտեսնենք, որ խորհելու շատ բան կա: Մանավանդ, որ պատերազմի ժամանակ տարածքները բավականին հաճախ են ձեռից ձեռք անցնում, իսկ շրջափակման հետեւանքներն անհամեմատ ավելի տեւական ու ծանր են, նաեւ՝ ավելի դժվար վերականգնելի:

Քելբաջարի գործողությունների հետեւանքով Ղարաբաղը կարողացավ ազատվել իր համար կենսական նշանակություն ունեցող Լաչինի մարդասիրական միջանցքի անվտանգությունը, կամ այլ կերպ ասած, վերացրեց լիակատար շրջափակման վտանգն ու հայտնվեց հարաբերական շրջափակման մեջ: Պատերազմը մնում է պատերազմ, եւ ջայլամի քաղաքականություն վարելու անհրաժեշտություն չկա՝ Ադրբեջանի պատերազմն ուղղված է Հայաստանի դեմ, եւ Հայաստանը բոլոր իրավունքներն ունի պայքարել շրջափակումը վերացնելու համար: Եթե միջազգային հանրությունը կարծես թե հակվում է դեպի Լաչինի մարդասիրական միջանցքի բացման անհրաժեշտության ընդունումը, ապա պետք է հաշվի առնենք նաեւ, որ այդ միջանցքի գոյությունը գրեթե ոչինչ չարժե առանց Հայաստանի շրջափակման վերացման: Իսկ դա իր հերթին նշանակում է, որ միջազգային հանրությունը պետք է ընդունի Հայաստանի՝ իր շրջափակումը ցանկացած ճանապարհով վերացնելու իրավունքը:

Ա. Բ.

Ակտիվ

ԱԶԱՏԱԳՐՎԵԼ ԵՆ ՂԱՋԱՐԸ ԵՎ ԴԻՎԱՆԼԱՐԸ

Կատաղի մարտեր Քելբաջարի մատույցներում

Մարտակերտ

Ապրիլի լույս 2-ի գիշերը եւ երեկ առավոտյան Ադրբեջանի Ֆիզուլու շրջանի տարածից հրետակոծվել են Հադրութի շրջանի Էղիլլու, Տող եւ Ազոխ գյուղերը, ինչպես նաեւ Ղզլոաջա բարձունքը: Նույն գիշեր ադրբեջանական կազմավորումները լայնածավալ գրոհ են ձեռնարկել Մարտունու շրջանի հարավ-արեւելյան ուղղությամբ: Այս մասին Ստեփանակերտից հաղորդում է մեր թղթակից ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ: ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերին հաջողվել է նախ կասեցնել թշնամու գրոհը, ապա անցնել հակահարձակման եւ ազատագրել Ղաջար ու Դիվանլար գյուղերը. ինչպես նաեւ տիրանալ Խազազ կոչվող մարտավարական մեծ նշանակություն ունեցող բարձունքին: Հիշեցնենք, որ այս բարձունքից ադրբեջանական կազմավորումները շարունակ հրետակոծում էին ինչպես Մարտունու, այնպես էլ Հադրութի շրջանների հայկական բնակավայրերը: Կատաղի մարտերի ընթացքում հայկական կողմից զոհվել է երկու զինվոր: Ադրբեջանական կողմի զոհերի թիվը ճշտվում է:

Միաժամանակ ադրբեջանական ուժերը փորձել են գրոհել Հադրութի շրջանի Խծաբերդ գյուղի ուղղությամբ: Հայկական կազմավորումները հաջողությամբ կասեցրել են թշնամու գրոհը:

Նախորդ գիշեր եւ երեկ օրվա ընթացքում ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը շարունակում էին հաջող մարտական գործողությունները Քելբաջարի շրջանի տարածքում: Երեկ հայկական ուժերը գտնվում էին Քելբաջար շրջկենտրոնից 4–5 կիլոմետր հեռավորության վրա, որտեղ կատաղի մարտերը շարունակվում են: Միաժամանակ ԼՂՀ կազմավորումներին հաջողվել է առաջ շարժվել Լաչինի մարդասիրական միջանցքի հյուսիսային մասում՝ այդ թիսով աղահովելով Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ճանապարհի անվտանգությունը: Ըստ նույն աղբյուրների, ապրիլի մեկի երեկոյան ադրբեջանցիներն ըստ երեւույթին սխալմամբ ոչնչացրել են սեփական մի ուղղաթիռ:

Իրենց հերթին ադրբեջանական աղբյուրները հայտնում են, թե իբր Լեռնային Ղարաբաղի զինված կազմավորումները Քելբաջարի շրջանի տարածքում գրավել են 13, իսկ Հայաստանի զինված ուժերը՝ 15 գյուղ:

«Ազգ»

Լեռնային

Ադրբեջանցիների գենոցի՞դ

Ապրիլի 1-ին Ադրբեջանի նախագահ էլչիբեյը Բաքվում արտասահմանյան դեսպանատներին եւ դիվանագիտական ներկայացուցչություններին տեղեկացրել է Քելբաջարի շրջանում ստեղծված ծայրաստիճան լարված իրավիճակի մասին եւ Հայաստանին մեղադրել ոչ ավել, ոչ պակաս «ադրբեջանցիների նկատմամբ ցեղասպանության եւ պետական ահաբեկչության» մեջ: Միաժամանակ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը տեղեկացրել է, թե նույն օրը մարտական գործողությունների գոտուց հաջողվել է դուրս բերել մոտ 10 հազար մարդ, որոնց մի մասն ինքնուրույն դուրս է եկել լեռնային արահետներով: Ըստ նույն աղբյուրների, խփվել է փախստականներին տեղափոխող մի ուղղաթիռ, որի մեջ եղել է մոտ 60 մարդ: Եւս մի ուղղաթիռ իբր հայկական կազմավորումների կրակից վնասվել է: ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի շտաբից հերքեցին այն տեղեկությունը, թե իբր ոչնչացրել են ադրբեջանական ուղղաթիռը, իսկ երեկ ՀՀ պաշտպանության նախարարության բանբերը հայտարարեց, թե քանի որ Հայաստանի զինված ուժերն ընդհանրապես չեն մասնակցում ռազմական գործողություններին, մնում է ենթադրել, որ ադրբեջանական կազմավորումներն իրենք են ոչնչացնում սեփական ուղղաթիռները՝ սխալմամբ կամ նպատակ ունենալով հայերին խաղաղ բնակչության դեմ ռազմական գործողությունների մեջ մեղադրելու պատրվակներ ստեղծել: Ակնհայտ է նաեւ, որ 10 հազար մարդ չէր կարող անհնարին կերպով դուրս գալ ռազմական գործողությունների գոտուց (եթե նույնիսկ համարենք, որ այդ թիվն իրական է), ուստի այս հայտարարությամբ ադրբեջանական կողմը փաստորեն ակամա խոստովանում է, որ հայկական կազմավորումները խաղաղաշնչական բնակչության ելքի համար միջանցք են թողել: «Ազգ»

Հեռախոսազրույց Ելցինի եւ Քլինթոնի միջեւ

Երեկ առավոտյան հեռախոսազրույց տեղի ունեցավ Ռուսաստանի եւ ԱՄՆ նախագահներ Բորիս Ելցինի եւ Բիլ Քլինթոնի միջեւ: Ինչպես հաղորդեց Ռուսաստանի նախագահի մամուլի ծառայությունը, կողմերը կարծիքներ փոխանակեցին Վանկուվերում կայանալիք գագաթաժողովի օրակարգի վերաբերյալ, որի ընթացքում հիմնական ուշադրությունը կհատկացվի տնտեսական եւ առեւտրական համագործակցության կոնկրետ հարցերին, ինչպես նաեւ հրատապ միջազգային խնդիրներին: ԻԴ

Դուգլաս Հըրդը կարճատեւ այցով Մոսկվայում

Երեկ երեկոյան Ինդոնեզիայի ճանապարհին կարճատեւ աշխատանքային այցով Մոսկվա ժամանեց Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Դուգլաս Հըրդը: 18.30-ին նախատեսվում էր նրա հանդիպումը Ռուսաստանի արտգործնախարար Անդրեյ Կոզիրեւի հետ: Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչության աշխատակից Յուրի Ֆոկինի խոսքերով, նրանք կքննարկեն «հարավսլավական հիմնահարցը», Ռուսաստանի եւ Եվրոհանձնաժողովի միջեւ գործընկերության եւ համագործակցության մասին պայմանագրի կնքման հեռանկարները, համաեվրոպական ընթացիկ զարգացման խնդիրները: Յու. Ֆոկինը նշեց նաեւ, որ, ըստ երեւույթին, նախարարները կքննարկեն նաեւ Ռուսաստանում ստեղծված ներքին քաղաքական իրավիճակը: ԻԴ

Հայաստան

Գրգռիչ գործողություն ՀՌԱԿ-ի դեմ

Երեկ գրգռիչ արարք կատարվեց Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության դեմ, անձամբ նրա Հանրապետական վարչության նախագահի՝ Ռուբեն Միրզախանյանի դեմ:

Հեսմիջօրեի ժամը 5:00-ին, այն պահին, երբ ՀՌԱԿ-ի ատենապետը դուրս էր գալիս Սայաթ-Նովա փողոցի վրա գտնվող Երգչախմբային ընկերության շենքից, որտեղ մասնակցել էր կուսակցությունների ներկայացուցիչների հետ Հայ մշավորականների միության կազմակերպած հանդիպմանը, նրան են մոտենում մինչ այդ շուրջ կես ժամ այնտեղ աղաստող 4–5 մեքենաներից դուրս եկած մարդիկ՝ ՀՀ ներքին գործերի նախարարության 4-րդ վարչության պետը, նրա տեղակալը, շուրջ 10 ավտոմատավորներ եւ մի տեսագրող, պահանջելով «ընկերակցել» իրենց դեղի ներքին գործերի վարչություն: Ստանալով օրինական առարկություն, թե դրա համար պետք է ներկայացնել համապատասխան փաստաթուղթ, 4-րդ վարչության պետը պնդում է, թե իրենք հավատի տեղեկություն ունեն, թե Ռ. Միրզախանյանին սպասող կուսակցության ծառայողական մեքենայի մեջ կա զենք, հետեւաբար պետք է հետեւել իրեն: Կրկին մերժում ստանալով, նա սպառնում է ուժ գործադրել, ինչը եւ անում է՝ ՀՌԱԿ-ի ատենապետին ձեռնակապեր անցկացնելով, շենքի առաջ եւ փողոցում հավաքված բազմաթիվ մարդկանց առաջ մտցնում մեքենա եւ ուղեւորվում, առաջից եւ հետեւից «ուղեկցող» մեքենաների ահազանգերը միացրած, դեղի ՆԳ վարչություն: Այնտեղ, առանձնացնելով Ռ. Միրզախանյանին, մեքենայի վարորդին եւ ուղեկցող երիտասարդին, փորձում են հարցաքննություն անցկացնել: ՀՌԱԿ-ի ատենապետը մերժում է առանց դատախազության աշխատակցի ներկայության հարցերին պատասխանել: Այդ ընթացքում մանրազնին խուզարկում են մեքենան, եւ հավաստիանալով, որ ոչ մի զենք չկա այնտեղ եւ առգրավելուց հետո վարորդի մոտ գտնված գրպանի դանակը, բաց են թողնում ձերբակալվածներին, մեկուկես ժամ պահելուց հետո:

Վերջում, 4-րդ վարչության պետը ներողություն է խնդրում կատարվածի համար եւ ինքնաբուխ բացատրություն տալիս, թե ՆԳ նախարարը տեղյակ չէ պատահածից եւ ինքն իր անձնական նախաձեռնությամբ է գործել:

Մարդու իրավունքների, օրինականության եւ Հայաստանում գործող պաշտպանական կուսակցություններից մեկի դեմ կատարված այդ գործողությունը լուսաբանելու, նման հակաօրինական արարքների էության մասին հասարակությանը իրազեկ պահելու համար ՀՌԱԿ Հանրապետական վարչությունը մամուլի ասուլիս է կազմակերպում երկուշաբթի, ապրիլի 5-ին, ժամը 13-ին, կուսակցության կենտրոնական գրասենյակում:

«Ազգ»

Երեւան

ԼՂՀ ուժերը Քելբաջարում միջանցք են թողել

Վերջին օրերին Քելբաջարի շրջանում ծավալված ռազմական գործողությունների արդյունքում ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերն ադրբեջանական բանակից առգրավել են մեծ քանակությամբ ռազմական տեխնիկա եւ մի քանի վագոն զինամթերք: Այս մասին երեկ տեղեկացավ Հայաստանի պաշտպանության նախարարության լրատվական ծառայության ղեկավար Արմեն Դուլյանից: Նա հայտարարեց նաեւ, թե Հայաստանի զինված ուժերի ոչ մի զինվոր մարտական գործողություններին չի մասնակցել, իսկ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը մարդասիրական միջանցք են թողել, որով անարգել կարող են հեռանալ ինչպես շրջապատման մեջ հայտնված ադրբեջանական կազմավորումները, այնպես էլ դրանց աղաստարկող քաղաքացիական բնակչությունը (մոտ 5 հազար մարդ):

ԼՂՀ հակաօդային պաշտպանության ուժերին, որոնք բազմիցս ապացուցել են իրենց հմտությունն ու որոնց համար առանձնապես դժվար չէ ոչնչացնել ադրբեջանական ուղղաթիռները, հրաման է տրվել ոչ մի կերպ չխոչընդոտել քաղաքացիական բնակչության տեղափոխող ուղղաթիռների թռիչքներին:

«Ազգ»

digitised by A.R.A.R.@

Պատմություն

Իրավիճակը մտահոգիչ

Երեկ իրազեկ աղբյուրներից տեղեկացանք, որ ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, անհանգստացած Լեռնային Ղարաբաղում եւ նրա շուրջ ծավալվող իրադարձություններից, նամակ է հղել ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռոբերտ Քոչարյանին, արտահայտելով իր մտահոգությունը: ՊՊԿ նախագահը ոգեւորված մի նամակով տեղեկացրեց իրերի դրությունը: Ամբողջ ուշ մեր ձեռքն անցան երկու տեքստերը, որ ներկայացնում ենք ստորեւ:

ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի նախագահ ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Պարոն նախագահ,

Հայաստանի կառավարությունն իր խոր անհանգստությունն է արտահայտում Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ պատերազմի էսկալացիայի առթիվ եւ գտնում է, որ դա կարող է խանգարել ԵԱՀԽ-ի շրջանակներում ընթացող խաղաղության բանակցությունների նշանավոր առաջընթացին: Մենք հակամարտ կողմերին կոչ ենք անում անհապուկ դադարեցնել ռազմական գործողությունները եւ նստել բանակցությունների սեղանի շուրջ: Հայաստանի Հանրապետությունը եւս մեկ անգամ հավաստում է իր պատրաստակամությունը՝ աջակցելու անհապաղ եւ առանց նախադայմանների զինադադար հաստատելու եւ Մինսկի խաղաղության հանձնաժողովներում Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղական, փոխզիջումային լուծում գտնելու գործին:

Խորին հարգանքով՝
Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության նախագահ Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն նախագահ,

Ի պատասխան Ձեր ս. թ. մարտի 1-ի դիմումի՝ հայտնում ենք.

Ամիսներ շարունակ մենք բազմիցս պատշաճորեն հավաստել ենք մեր պատրաստակամությունն անհապաղ եւ առանց նախադայմանների զինադադար հաստատելու մասին: Սակայն մեր կոնստրուկտիվ քայլերը վիժեցվել են մի կողմից Ադրբեջանի ռազմատենչ խաղաղասիրության, մյուս կողմից՝ Մինսկի համաժողովում Լեռնային Ղարաբաղի մասնակցության կարգավիճակի անորոշության պատճառով: Մենք համոզվել ենք, որ ԵԱՀԽ-ի շրջանակներում ընթացող բանակցություններն Ադրբեջանն օգտագործում է հողակալելու համար իր ռազմական նկրտումները, որի վկայությունն են մարտ ամսին նրա սանձազերծած լայնածավալ հարձակումները Մարտակերտի շրջանում եւ Լաչինի մարդասիրական միջանցքում: Ինչպես նշված եր ս. թ. մարտի 31-ի իմ հայտարարության մեջ, դրանց ի պատասխան ԼՂՀ իշխանությունները հարկադրված էին օգտվելու ինքնապաշտպանության իրենց բնական իրավունքից եւ ոչնչացնելու մեզ համար վտանգ ներկայացնող ռազմական հենակետերը: Լեռնային Ղարաբաղը մտադրություն չունի Ադրբեջանից տարածքներ զավթելու, բայց եւ միաժամանակ չի կարող չհակազդել սպառնացող վտանգներին: Դրանով հանդերձ մենք պատրաստ ենք անհապաղ նստել բանակցությունների սեղանի շուրջ՝ ռազմական գործողությունները դադարեցնելու նպատակով, եթե պատրաստակամություն դրսեւորի նաեւ հակամարտ կողմը:

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ
02. 04. 1993 թ.

Երեւան

Արտգործնախարարը կմեկնի Սիրիա

Երեւան, 2 մարտի, Սնարֆ: Ինչպես հայտնի դարձավ Սնարֆ գործակալությանը հավաստի աղբյուրներից, մարտի 3-ին Հայաստանի արտգործնախարար Վահան Փափազյանը մտադիր է այցելել Սիրիա: Նախատեսվում է, որ նա կմասնակցի այդ արաբական երկրում Հայաստանի Հանրապետության դեսպանատան բացման արարողությանը: Նախատեսվում են նաեւ հայ նախարարի մի շարք հանդիպումներ Սիրիայի պաշտոնական անձանց հետ:

Հաղորդվում է նաեւ, որ մարտի 9-ին տեղի կունենա Փափազյանի աշխատանքային այցելությունը Իրանի Իսլամական Հանրապետություն: ■

Հոդված

«ՄԵՐ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՄԵՂՔԻ ՄԵՋ ՉԷ»

ասում է ՀՀ մշակույթի նախարարը

«Մեր մշակույթի ներկա վիճակը մեղքի մեջ ընկած չեմ համարում, որ դրա համար որեւէ մեկին մեղավոր համարեմ: Սա մեր հանրապետության ներկա վիճակի մի արտահայտությունն է, եւ այստեղ պետք է ոչ թե մեղավորներ փնտրել (եթե մեղավորներ կան, մենք էլ մեր նախարարությունն է), այլ դուրս գալու ելքեր գտնել», երեկ մամուլի ասուլիսում հայտարարեց ՀՀ մշակույթի նախարար Հակոբ Մովսեսը, պատասխանելով մեր այն հարցին, թե մեր մշակույթի ներկա վիճակի համար որքանով է մեղավոր համարում իրենց նախարարությանը:

Եւ կարծես որոշես դրա հաստատում, նրա ներածական խոսքը հիմնականում նվիրված էր կատարվելիք քայլերին: Նախարարը նշեց, որ պետության մշակութային քաղաքականության հիմնական խնդիրներից պետք է լինի պետություն-մշակույթ հարաբերության ճշգրիտ կազմակերպումը: Մինչդեռ այսօր ոչ միայն ֆինանսական, այլ նաեւ պետություն-մշակույթ հարաբերությունից ելնելով այդպես լինել չի կարող, ասաց նա: Նախարարը առաջնային համարեց պետության կողմից պրոֆեսիոնալ արվեստի հովանավորման խնդիրը, ընդ որում դա հնարավոր գտավ այն դեպքում, երբ հանրապետության ԳԽ-ն ընդունի տեղական ինքնակառավարման օրենքը. «այսինքն, երբ մշակույթի նախարարությունը համոզված լինի, որ համակարգը բեռնաթափվելուց հետո այն, ինչ պրոֆեսիոնալ արվեստ հասկացության շրջանակներում չի տեղավորվում», բայց նույնպես անհրաժեշտ գոյություն է, պետական կառավարման սահմաններից դուրս գալով, անտերության չի մատնվի: Ինչ վերաբերում է մշակութային կյանքի բարեփոխումներին, այստեղ եւս նախարարն անհրաժեշտ համարեց տեղական ինքնակառավարման օրենքի գոյությունը:

Հավաստելով պետության՝ մշակույթով հետաքրքրվելը, պրն. Մովսեսը հայտնեց, որ պետության տրամադրած միջոցները (աշխատավարձի մասը հանած) նախարարությունը պատրաստ է տրամադրել ոչ միայն պետական հիմնարկներին: Յուրաքանչյուր մշակութային կազմակերպության, անհատի նախաձեռնություն մշակույթի նախարարության կողմից հավանության արժանանալու դեպքում կարող է ֆինանսավորվել, օժանդակվել նախարարության միջոցով: Նախարարը տեղեկացրեց, որ այս տարի հաստակացումներ են արվել «Մետրո» թատրոնին, 13-րդ սիմֆոնիային եւ այլն եւ այլն, բոլորին չի կարելի թվարկել:

Հայաստանի մշակույթի նախարարության գոյության երաշխիք հանդիսացող ծրագրեր եւս ներկայացվեցին ասուլիսում, չնայած իրը՝ նախարարը մեր մշակույթը համարելով ինքնակառավարվող եւ ինքնաբավ, գտավ, որ ներկա անցումային փուլում մշակույթի նախարարություն կոչվածը դեռեւս անհրաժեշտ է, իսկ հետագայում... Մանավանդ որ գոյություն ունեն պետություններ, որոնք մշակույթի նախարարություն չունեն, բայց բարձր մշակույթ ունեն: Այս տարի Հայաստանի էստրադային նվագախմբի բազայի վրա կազմավորվելու է էստրադային թատրոն: Կամերային թատրոնի հիման վրա բացվելու է երիտասարդական մշակույթի կենտրոն, որի ստեղծմանը նախարարությունը հատկացրել է մոտ 5 մլն ռուբլի: Հայաստանում բարգմանական գրականությանը զարկ տալու նպատակով բանակցություններ են վարվում մեր հանրապետությունում գործող օտարերկրյա դեսպանությունների հետ. գերմանական, ֆրանսիական, ամերիկյան կողմերի հետ ստեղծվել է «Էգո» հրատարակչություն, որը տարեկան 15-20 գիրք կտպագրի յուրաքանչյուր երկրի գրականությունից, ընդ որում յուրաքանչյուրը կֆինանսավորվի տվյալ երկրի դեսպանության կողմից: Հ. Թումանյանի տուն-թանգարանում ստեղծվել է «Կոտտ» հրատարակչությունը, որը լուծելու է Հայաստանի երիտասարդ բանաստեղծների խնդիրները, տպագրելու է բանաստեղծությունների առաջին գրքերը: Քայլեր են արվում ստեղծելու հայ-իտալական «Թումանյան-Դանթե» ընկերություն, ընդ որում կան առաջին դայմանավորվածությունները՝ Իտալիայում կազմակերպվելու է հայկական մուլտֆիլմերի ցուցադրում, իսկ Հայաստանում՝ իտալական երաժշտության փառատոն:

Ցուցահանդեսային բնագավառում, որը մշակույթի նախարարը անվանեց նվազ ցնցումների ենթարկված, նորություն է լինելու նախարարությանը կից ցուցահանդեսային-նկարչական տնօրինությունը, որը համակարգելու է մեր նկարիչների արտասահմանյան ցուցադրումների գործը:

Անդրադառնալով մեր հանրապետությունից մշակույթի գործիչների արտահոսքի խնդրին, նախարարը նշեց, որ այդ խնդիրը մեզ մոտ առավելապես սոցիալական է: Սակայն «եթե փորձենք սոցիալական լուծում տալ, կկանգնենք հասարակություն եւ արվեստագետ խնդրի առջեւ, որի լուծումը պետականորեն եւ միջոցառումներով անհնար է»: Այդ հարցը պրոֆեսիոնալ արվեստի հովանավորության միջոցով կարելի է լուծել, սակայն միայն մասնակիորեն:

Բնականաբար, մշակույթի նախարարին հարց ուղղվեց նաեւ մշակույթի արժեքների գողության դեպքերի մասին, ի պատասխան որի պրն. Մովսեսը հայտնեց, որ վերջին 2-3 տարում կատարված բանգարանային 9 գողություններից չեն բացահայտվել միայն վերջին երկուսը՝ անցյալ տարի պատկերասրահից գողացված նկարների փաստերը:

ԳԱԳԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Կյանք

Առայժմ ԱՀԿ-ների աշխատանքի խափանումները անխուսափելի են

Երեւանի «Քաղաքային հեռախոսային ցանց» արտադրական միավորման կայանային բաժնի մասնագետ Սուրեն Պետրոսյանը Նոյյան տարածքի գործակալության թղթակցին հայտնել է, թե ավտոմատ հեռախոսակայանների աշխատանքի վերսկսման առաջին օրերին հնարավոր են որոշակի խափանումներ, ինչը կրում է զուտ ժամանակավոր բնույթ եւ կապված է սարքավորումների աշխատանքային ռիթմի մեջ մտնելու հետ: ՆՏ

Պետերբուրգի պետավտոտեսչության տվյալների համաձայն, անցյալ տարի քաղաքի տարածքում գողացվել է մոտ 7 հազար ավտոմեքենա: Եթե նախկինում գողացված մեքենաների մեծ մասը տարվում էր քաղաքամերձ շրջաններ, արդա այժմ այդ ցուցանիշը նվազել է: Ներքին գործերի շրջաբաժինների հաստիքների ավելացումը թույլ տվեց քաղաքը «փակել» պետավտոտեսչության ոստիկանական ուժերով եւ վերահսկել ավտոմոբիլների երթեւեկությունը: Ավտոտեսչության ղեկավարությունը որոշել է հատուկ ստորաբաժանումներ ստեղծել փոխադրամիջոցների գողությունների դեմ պայքարելու համար: ԻՖ

Մոսկվա

Ռուսական համայնքների կոնգրեսը ընդդեմ Ադրբեջանի քարոզչության

Մոսկվա, 1 մարտի, Սնարֆ: Հայաստանի ժողովրդական պատգամավոր Ստեփան Գրիգորյանը վերամիասնացման ճանապարհին կատարված կարեւոր քայլ է անվանել Ռուսաստանի վերածնության միության Ղեկավարությամբ Մոսկվայում անցկացված ռուսական համայնքների կոնգրեսը, որն իր նպատակը հռչակեց Ռուսաստանի ազգային դեսպանների եւ նախկին ԽՍՀՄ որեւէ կետում բնակվող ռուսների իրավունքների պաշտպանությունը:

Ինչպես Սնարֆի թղթակցին ասաց Ստեփան Գրիգորյանը, կոնգրեսի աշխատանքին Հայաստանի ռուսական համայնքի մասնակցությունն էական հարված հասցրեց Ադրբեջանի լրատվության միջոցների քարոզչությանը, որոնք մշտապես ուռճացնում են Հայաստանից ռուսների, ուկրաինացիների, հրեաների իբր արտաքսման թեման:

Գաղթի երեւույթներն առկա են. դա չէին թաքցնում նաեւ կոնգրեսում ելույթ ունեցողները՝ ռուսական մշակույթի «Ներդաշնակություն» միջազգային կենտրոնի նախագահ Վլադիմիր Միխայլովը, ԵԱՀԽ մարդու իրավունքների միջազգային կոնգրեսի համանախագահ Վիտալի Դանիլովը եւ ռուսական մշակույթի «Օդա» ընկերության նախագահ Գալինա Կուլիկովան: Նրանք նշում էին, որ ռուսները, ինչպես հայերը եւ մյուս ազգությունների ներկայացուցիչները, Հայաստանից մեկնում են, չդիմանալով ցրտին, լույսի եւ գազի բացակայությանը, հիմնական սննդամթերքների եւ դեղամիջոցների մշտական պակասին: Հայաստանի ռուս քաղաքացիները կոնգրեսի ամբիոնից խոսեցին Ադրբեջանի կողմից Հայաստանի չդադարող տրանսպորտային շրջափակման մասին, սահմանամերձ հայկական գյուղերի ու քաղաքների, այդ թվում հիմնականում ռուսաբնակ Կրասնոսելսկի շրջանի հրթիռակոծումների ու հրետակոծումների մասին:

Այդուհանդերձ ռուսախոս բնակչության մեծ մասը մնում է հանրապետությունում եւ Հայաստանի բոլոր քաղաքացիների հետ մեկտեղ ելք է փնտրում տնտեսական ճգնաժամից: Այդ գործում էական օգնություն կարող է ցույց տալ ռուսական համայնքների կոնգրեսը, վերջում ասաց Ս. Գրիգորյանը: ■

4 կալանավորներ փախուստի փորձ են ձեռնարկել Վոլոգդայի մարզի Վիտեգրա քաղաքում գտնվող ժամանակավոր պահպանման մեկուսարանից: Նրանք, մոտ կանչելով հերթապահին, ասման ջուր են գինել նրա երեսին եւ մի քանի անգամ մեսաղյա շերեփով խփել գլխին: Սակայն քաջարի պահակն իր մեջ ուժ գտավ զանգահարել հեռախոսով այն պահին, երբ հանցագործները կռվում էին նրա ընկերոջ հետ: Մենամարտի ելքը որոշեցին ավտոմատավորները, որոնց հետ հանցագործները չցանկացան գործ ունենալ: Սնարֆ

Բարոյ

Ադրբեջանը կոչ է անում դատապարտել Հայաստանին

Ադրբեջանի Միլլի մեջլիսը (խորհրդարանը) դիմել է ՄԱԿ-ին եւ ԵԱՀԽ-ին, կոչ անելով դատապարտել Հայաստանին որպես ագրեսորի, որն «իր գործողություններով սպառնալիքի տակ է դնում ոչ միայն Անդրկովկասի, այլեւ ամբողջ Մերձավոր ու Միջին Արեւելքի խաղաղությունը»: Հինգշաբթի երեկոյան խորհրդարանի ընդունած դիմումի մեջ ընդգծվում է, որ Ադրբեջանի տարածքում, մասնավորապես Քելբաջարի շրջանում, հայկական ուժերի գործողությունները «վկայում են, որ ահաբեկչությունը եւ ցեղասպանությունը հասցվել են պետական քաղաքականության աստիճանի»: Խորհրդարանը միջազգային ազդեցիկ կազմակերպություններից պահանջել է ներգործուն միջոցներ ձեռնարկել ագրեսորին սանձահարելու համար: Ուրբաթ օրն Ադրբեջանի արտգործնախարարությունը պահանջեց Հայաստանին ագրեսոր ճանաչել: Նրա հայտարարության մեջ նշվում է, որ ագրեսորի նկատմամբ հարկավոր է կիրառել միջազգային օրենքով նախատեսված բոլոր ներգործուն միջոցները: ԻՖ

Ընտրությունները սեպտեմբեր-հոկտեմբերին

Ադրբեջանի խորհրդարանի վաղաժամկետ ընտրությունները, ըստ երեւույթին, տեղի կունենան 1993 թ. սեպտեմբերի վերջին-հոկտեմբերի սկզբին: Այդ մասին հայտարարեց նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը մարտի 1-ի իր հեռուստաելույթում: Նախագահը հաղորդեց, որ ինքն անձամբ կդիմի խորհրդարանին հենց այդ ժամանակ ընտրություններն անցկացնելու խնդրանքով: Ա. Էլչիբեյը նշեց, որ միտք հանդես է եկել խորհրդարանական վաղաժամկետ ընտրությունների անցկացման օգտին եւ գտնում է, որ ընտրությունները հնարավոր է անցկացնել արդեն հունիսին: Սակայն քաղաքական կուսակցությունների եւ շարժումների մեծամասնությունը կողմ է, որպեսզի նոր խորհրդարանը կազմավորվի աշնանը: Ա. Էլչիբեյը հաղորդեց, որ չի ընդունել հանրապետության ներքին գործերի նախարար Իսկանդեր Համիդովի հրաժարականը, քանի որ ներկա ճգնաժամային իրավիճակում այդ հրաժարականը «Ադրբեջանի շահերին դեմ է»: Նախագահը, դատապարտելով նախարարի գործողությունները, կապված «Իսթիգլալ» ընդդիմադիր թերթի խմբագրին ծեծի ենթարկելու հետ, նշեց, որ հրապարակումներից մեկի մեջ «ճիշտ վիրավորանք» է հասցվել Ի. Համիդովին, նվաստացվել է նրա արժանապատվությունը»: Ա. Էլչիբեյը նշեց, որ եթե Ի. Համիդովը եւս մեկ անգամ թույլ տա նման բան, «մենք նրա հետ այլեւս չենք աշխատի»: ԻՖ

Ստեփանակերտ

Լեռնային Ղարաբաղում մարտնչում են մոտ 500 եզդի կամավորներ

Հայաստանի «Եզդիների ազգային միության» փոխնախագահ Թեմուրբեկ Խաստոյանը Նոյյան տարածքի թղթակցին հայտնել է, թե Հայաստանում բնակվող մոտ 60 հազար եզդիներից ամենաքիչը 480-ը կամավոր մարտնչում են Լեռնային Ղարաբաղի ազատագրության համար: «480-ը միայն գրանցվածներն են, սակայն կան այնպիսիք, որոնք մնացել են առանց հաշվառվելու: Եզդի ժողովրդի տված զոհերի մի մասը հողին է հանձնված իրենց հայ մարտական ընկերների կողքին, ոմանք էլ հանգչում են եզդիների Ազգային գերեզմանատանը», ասաց նա: ՆՏ

Վրաստան

Հայ կամավորների գումարտակ Ախալքալաքում

Վրաստանի Ախալքալաքի շրջանում կազմավորվել է գումարտակ, որի կազմի մի ավելի քան 80 տոկոսը տեղացի հայ կամավորներ են: Նրանք պատրաստակամություն են հայտնել մեկնել Աբխազիա «Վրաստանի տարածքային ամբողջականությունը եւ ինքնիշխանությունը պաշտպանելու համար»: Նախատեսվում է, որ մոտ օրերս գումարտակը կուղարկվի մարտական գործողությունների գոտի: ԻՖ

digitised by A.R.A.R.@

ԳԽ

ԳԼՈՒԽԿՈՏՐՈՒԿՆԵՐՈՎ ԼԻ ԼԵԶՎԻ ՕՐԵՆՔԸ

• Երկար չարչրկված, նստաշրջանից նստաշրջան տեղափոխված լեզվի օրենքը, որն իր սկզբնական տարբերակի ծավալի համեմատ զգալիորեն սեղմվել էր, ի վերջո, երրորդ ընթերցմամբ խորհրդարանի կողմից գոյության իրավունք ստացավ: Որքանո՞վ էր արդարացված ՀՀ Գերագույն խորհրդի նման վերաբերմունքը:

«Լեզվի օրենքի նկատմամբ վարված քաղաքականությամբ Հայաստանի օրենսդիր մարմինը ղարգարոս ինքն իրեն խայտառակեց՝ նախնական, իմ կարծիքով, իդեալական տարբերակը ԳԽ-ում մեծամասնություն կազդող կեղծ ժողովրդավարների եւ օտարամոլների ջանքերով տաղալվեց: Ստիպված էինք դիմել զիջումների եւ արդյունքում այժմ ունենք հոչակագրի նմանվող կցկտուր մի փաստաթուղթ: Թեեւ հանուն արդարության պետք է ասել, որ հիմնարար սկզբունքներն այնուամենայնիվ հաջողվեց ղահղանել. կրթական համակարգում դասավանդման, ներհանրապետական գործավարության լեզուն հայերեն է, իսկ ղաբտոնատար անձինք ղարտավոր են տիրապետել մայրենիին: Իսկ օրենքի միակ արժանիքն այն է, որ ՀՀ կառավարությանն առնքեր պետք է ստեղծվի դրա դրույթների կատարումը վերահսկող լեզվի պետական տեսչություն», ասաց ՀՀ ԳԽ գիտության, կրթության, լեզվի եւ մշակույթի մշտական հանձնաժողովի անդամ Վալերի Միրզոյանը:

Տրամաբանորեն հակառակ կարծիքի էր նույն հանձնաժողովի փորձագետ Արծրուն Սահակյանը: «Լեզվի օրենքն իր ներկայացման օրից հետաքրքիր զարգացում ապրեց՝ ոչ վաղ անցյալի հեղափոխական ռոմանտիկայով տոգորված սկզբնական վիճակից. մոտ երկու տարվա ընթացքում բորափելով ողջ ավելորդությունները, վերածվեց նորմալ օրենքի: Եվ պետք է նկատել, որ այս խնդրում խորհրդարանն իր դերում գտնվեց»:

Ինչեւէ, լեզվի օրենքը կյանքի է կոչվել, եւ նրա դրույթները տեսական բանավեճերի առարկա լինելուց դարձել են կատարման համար ղարտադիր նորմեր, որոնց անտեսումն այսուհետ, պետք է ենթադրել, այնման էլ դյուրին չի լինի: Փորձնքնորոշվել: Հոդված 1-ում գրված է. «Հայաստանի Հանրապետության լեզուն գրական հայերենն է»: Ինչպես ղարզվեց, «գրական» բառի տակ օրենսդիրները նկատի են ունեցել մայրենու եւ արեւելահայ, եւ արեւմտահայ ճյուղերը: Սա միգուցե բնական պետք է համարել: Սակայն հոդված 2-ը ՀՀ տարածքում գտնվող կրթական եւ ուսումնական համակարգում դասավանդման եւ դասընթացների լեզուն «գրական» հայերենն է համարում: Հավանաբար ենթադրվում է, որ ուսուցիչները ու դասախոսները իրենց հայեցողությունից կամ նախասիրությունից ելնելով ուսումնական հաստատություններում սովորողներին կրթելիս եւ խրատելիս կարող են օգտագործել ինչպես արեւելահայերենը, այնպես էլ արեւմտահայերենը: Եթե այդպես է, ապա անհայտ է մնում՝ նրանց սաները հավասարապես պետք է տիրապետե՞ն «գրական» հայերենի կարգավիճակ ունեցող երկու լեզուներին էլ, թե այս հարցում վերջիններիս նույնպես ընտրության հնարավորություն է տվվելու:

Նույն հոդվածի մյուս պարբերությունը բավականին կտրուկ է. «Հայաստանի Հանրապետության բոլոր միջնակարգ մասնագիտական, մասնագիտական-տեխնիկական եւ բարձրագույն ուսումնական հաստատություններում հայոց լեզվի ընդունելության քննությունները եւ հայոց լեզվի ուսուցումը պարտադիր են»: Միայն թե հաջորդ նախադասությամբ հետաքրքիր վերապահում է արված. «Հայերենաղարձների, փախստականների, ՀՀ տարածքում բնակվող այլազգի քաղաքացիների ու օտարերկրյա քաղաքացիների ընդունելության քննությունները եւ ուսուցումն իրականացվում են ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով»: Հավանաբար այստեղ մեծ դեր է խաղացել հայ ժողովրդի հյուրերի ճմահաճույքներին ընդառաջ գնալու ավանդական սովորությունը: Եվ քանի որ օրենքի այս կետը ուժի մեջ է մտնելու 1993 թ. սեպտեմբերի մեկից, ապա մոտ ժամանակներս հայտնի կլինի, թե ինչ չափով է արտահայտվելու Հայաստանի կառավարության հյուրընկալության ասիճանը:

Հոդված 3-ը կարելի է համարել «Լեզվի մասին» օրենքի մեխը՝ «Պաշտոնատար անձինք եւ սպասարկման ոլորտում աշխատող ՀՀ քաղաքացիները ղարտավոր են տիրապետել հայերենին»: Այսպիսով, վերջնական հարված է հասցվում հայ քաղքենի ծնողների օտարամոլ հոգեբանությանը՝ իրենց երեխաներին սպագա տնօրենների, նախարարների եւ ավելի բարձր դիրքերում տեսնել երազողները զավակների բերերը բռնած միայն հայկական դպրոցներ տանող ճանապարհները կբռնեն:

Հետաքրքիր իրավիճակ է ստեղծվելու իշխանական աթոռների վրա արդեն նստածների համար՝ վերոհիշյալ ղահանջն ուժի մեջ է մտնելու 1994 թ. հունվարի մեկից: Եվ եթե նկատի ունենանք, որ «տիրապետելը» իրավաբանորեն վերծանվում է «գրել, կարդալ եւ հաղորդակցվել», ապա ներկայիս որոշ ղաբտոնյաներ մնացած ինն ամիսներում հայերենի իմացության հարցում գերջանքեր պետք է գործադրեն: Հակառակ դեպքում նրանց սպասվում է... Ճիշտն ասած, ղաբժամիջոցների սղեկտրի խնդրում առայժմ հստակություն չկա՝ ՀՀ Գերագույն խորհրդի իրավական եւ կրթության, գիտության, լեզվի ու մշակույթի հարցերի մշտական հանձնաժողովներին հանձնարարված է. «Եռամսյա ժամկետում Գերագույն խորհրդի քննարկմանը ներկայացնել սույն օրենքին համապատասխան ՀՀ վարչական իրավախախտումների օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու վերաբերյալ օրենքի նախագիծ»:

ՀՈՎՍԵՓ ՊՈՂՈՍՅԱՆ

Մոսկվա

Նախկին ԽՍՀՄ մահմեդականները կստեղծեն խորհուրդ

Նախկին ԽՍՀՄ մահմեդականները պետք է ստեղծեն նախկին միութենական հանրապետությունների մահմեդական ղեկավարների խորհուրդ: Այդ մասին Ինտերֆաքսին տված հարցազրույցում ասաց Մոսկվայի եւ Մոսկվայի մարզի իսլամական կենտրոնի նախագահ, Մոսկվայի գլխավոր մզկիթի իմամ Ռավիլ Գայնուտդինը:

Նա հիշեցրեց, որ նախկինում գոյություն է ունեցել համակարգիչ կենտրոն՝ ԽՍՀՄ մահմեդական կազմակերպությունների միջազգային կապերի բաժին: Հիմա այն չկա: Պառակտվել են նաեւ երբեմնի միասնական հոգեւոր վարչությունները:

Ռ. Գայնուտդինի խոսքերով, «անջատական միտումներ» են ի հայտ գալիս նաեւ ԱՊՀ եւրոպական մասի եւ Սիբիրի մահմեդական համայնքներում, որտեղ «մի շարք ընդդիմադիր իմամներ» փորձում են ինքնուրույնաբար լուծել բոլոր հարցերը, ինչը «բացասաբար է ծնում մահմեդական համայնքների միջեւ եւ բուլացնում հոգեւոր վարչությունը», ասաց Ռ. Գայնուտդինը: ԻԴ

Թուրքիայի նախագահ Թուրգուտ Օզալը ապրիլի 11-13-ը պաշտոնական այցով կլինի Թուրքմենստանում: Ինչպես ԻԴ-ին հայտարարեց Թուրքմենստանի փոխվարչապետ Բորիս Շիխմուրադովը, առաջիկա բանակցություններում նախատեսվում է քննարկել տնտեսության, առեւտրի, մշակույթի եւ կրթության բնագավառի համագործակցության հարցեր: Բ. Շիխմուրադովի խոսքերով, Թ. Օզալի այցն իրականացվում է «բարձր մակարդակի հանդիպումների կանոնավոր փոխանակման շրջանակներում»: ԻԴ

Մնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում գործող կոռպորատիվը՝ «Նադեժդա»-ն, վաճառում է պտղատու ծառերի տնկիներ շուկայական գներից բավականին ցածր գներով:

☎ 28-52-91, Մարկոսյան Ատոմ

Կարմ

«Կանաչ գենոցիդը» 75 մլն. ռ. վնաս

«Դա կանաչ գենոցիդ» է, այսպես բնութագրեց անցած ձմեռը ՀՀ գլխավոր անտառապահ Ֆելիքս Մարաջանյանը: Նոյյան տապան գործակալության թղթակցի հետ ունեցած զրույցում նա հայտնել է, որ 1992-1993 թթ. ձմռանը Հայաստանում հատված ծառերը կազմել են 49 հազար խմ փայտ, ինչը մոտավորապես կազմում է 75 մլն. ռուբլի: Ամենից շատ տուժել են Գառնու, Վանաձորի, Հրազդանի, Կոտայքի եւ հատկապես Սեւանա լճի մերձակայքում գտնվող անտառները: Ինչ-որ կերպ կորցրածը փոխհատուցելու համար այս գարնանը 14 մլն. տնկիներ պետք է դրվեն:

Ինչ վերաբերում է մյուս ձմեռ Հայաստանի բնակչությանը վառելիքով ապահովելու խնդրին, Մարաջանյանը հաղորդել է, որ Հայաստանում կա 300 հազ. խմ փայտ, որը կարող է օգտագործվել այդ նպատակով, սակայն, ըստ նրա, այս քանակությունը բնակչությանը վառելիքով կարող է ապահովել միայն 30 տոկոսով եւ հանրապետության վրա կնստի 930 մլն. ռուբլի (այս գումարի մեջ են մտնում վառելիքի, աշխատավարձի, փայտանյութը տեղափոխելու համար ճանապարհների կառուցման ծախսերը):

Մարաջանյանը հայտնել է նաեւ, որ ծրագրվում է փայտանյութ բերել Ռուսաստանից, մասնավորապես՝ Կրասնոդարի երկրամասից: ՆՏ

Փիլիսոփ

Աշխարհի հետ խոսող հայը

Հալեպի կենտրոնական փողոցներից մեկի վրա 1911 թ. ի վեր կա մի հուշարձան՝ Օթել Պարոն: Քաղաքի տեսարժան վայրերից է համարվում այն, գրեթե պատմական մի հուշարձան, որ նշանավոր է ոչ թե իր շինությամբ (ներկայիս Հալեպում շատ լավերը կան), այլ պատմական դեմքերի ժամանակավոր կացարանը լինելու հանգամանքով: Օսմանյան եւ այնուհետեւ ֆրանսիական տիրապետության շրջանում Հալեպ այցելած բոլոր քաղաքական դեմքերը այնտեղ են բնակվել, այնտեղ են տեղի ունեցել կարեւոր խորհրդակցություններ, բանակցություններ, նյութվել միջազգային դաշտեր, լրտեսական գործարքներ... Իսկ 2-րդ աշխարհամարտից հետո, հայերիս համար այն տարբեր նշանակություն է ստացել՝ լինելով տարբեր գաղութներից ու մայր հայրենիքից Հալեպ այցելող մտավորականների եւ քաղաքական գործիչների ժամադրավայրը: Վերջին տասնամյակներին պանդոկի ոգին էր նրա տերը՝ Գրիգոր Մազլումյանը: Ստավորական խառնվածքով մի մարդ, որ գիտեր ոչ միայն ծի կացարան եւ ընտանեկան ջերմիկ մթնոլորտ տալ այցելու մտավորականներին, այլեւ օգնել նրանց, օգնել այն բոլոր ծեռնարկումներին, որոնց նպատակն էր նպաստել հայության եւ մայր երկրի մտավոր ուժի զորացմանը: Եւ այժմ չկա նա, պարոն Գոգոն, ինչպես սիրում էին նրան կոչել հայերն ու արաբները հավատարիմ:

Հր հարեղբայրն ու հայրը Օնիկ եւ Արմենակ Մազլումեանները հիմնած էին այս հիւրանոցը. Օթել Պարոնը, որ իր հիմնադրման օրերում հրաշք ուսախս մըն էր հայու ջանքերով հաստատուած արաբական այս յինաղ երկրին մէջ: Այս պանդոկը բարձրագոյն վիճակի մը հասցնողը Պարոն Գոգոյին հայրն էր՝ Արմենակ Մազլումեանը, որ սիրաշահելով երիտթրքական եռապետութեան մէկ անդամը՝ Ջեմալ փաշան, փրկած էր բազում հայերու կեանքը:

Գրիգոր Մազլումեանը իր հօր որդին էր: Նախ գործակցեցաւ եւ ապա շարունակեց անոր գործը, իր անձին հմայքովը աւելի ընդարձակելով Օթել Պարոնին հեղինակութիւնը:

Աշխարհի հետ խօսող հայը կոչեցի զինք: Ինչո՞ւ: Որովհետեւ այս հանգիստի տունն, այս օթեղն անցած են բազաւորներ, թագուհիներ, իշխանուհիներ, նշանաւոր օդաչուներ, աշխարհի վրայ անուն ունեցող գրողներ, իրենց պասկանած երկիրներուն շահերը գերազանցորէն ինքացող դեսպաններ, հռչակաւոր արուեստագէտներ, եթէ միայն թուենք անունները այս բոլորին, կարելի կըլլայ ամբողջ գիրք մը կազմել անուններովը եօթանասուն հինգ տարիներու ընթացքին Պարոն Գոգոյին ծանօթութիւն հաստատած մարդոց:

Եւ ինչ կարծէք, պարզ ծանօթութի՞ւն միայն, եթէ օթել այցելողը Ֆրանսայի, Ամերիկայի, Անգլիոյ կամ Գերմանիոյ դեսպանն էր, անոյշման այդ անձնաւորութիւնը պիտի օգտուէր Պարոն Գոգոյին անսպիս գրաղարանէն: Իր ճարտար անգլերէնին ու ֆրանսերէնին կամ գերմաներէնին, կըռուած խօսքին, որ Գոգոն կը միացնէր փաստերը, բերելով գիրքեր, որ իր մեծանուն հիւրերը հաւաստիորէն իմանային հայկական հարցը:

Եթէ անոնք Ֆրանսայի, Անգլիոյ կամ Գերմանիոյ եւ կամ այլ երկրի մը դեսպաններն էին, ինքը՝ Պարոն Գոգոն՝ Հայաստանի անոյաբտօն դեսպանն էր, դեսպան, որ գիտէ պաշտպանել իր երկրին ու ժողովուրդին շահերը, ոչ թէ լալով, այլ հայ արժէքներու մասին գաղափար մը տալով իր խօսակիցներուն: Անոնք պետք է հիւրասիրուէին հայկական ճոնեաթով, պետք էր ունկնդրէին անկրկնելի ձայնը Լուսինէ Ղամարեանին, պետք էր ըմբոշխնէին Հայաստեան Առանձին գործերը, պետք էր դիտէին այլազան հրատարակութիւններ կը դիմէին մեր սիրելի Գոգոյին կարծիքին եւ անոր խորհուրդները կընդունէին շատ անգամ:

Պարոն Գրիգոր Մազլումեանը հեղինակ չդարձաւ, գիրք չգրեց, հակառակ Ուիլիամ Սարոյեանին իսկ խնդրանքին, որ ըսած էր իրեն. «Գոգո, գրէ Օթել Պարոնի պատմութիւնը, եւ ես պատիւ պիտի զգամ գրելով այդ գիրքին յառաջաբանը»:

Գիրք մը չհեղինակեց Պարոն Գոգոն, բայց իր ամբողջ կեանքը դարձուց ուսապարտ հայերու հայկական ճարտարապետական կոթողները եւ անոյշման գոհ տրով մնկնէին այս հայ օջախէն:

Յիրաւի, եթէ մենք առիթը ունենանք ընթերցիչ մը բանալու վերջին տասնամեակներուն Եւրոպայի զանազան երկիրներուն մէջ հրատարակուած պատմագիտական, հնագիտական եւ քաղաքական գրականութեան վրայ, հոն պիտի գտնենք Պարոն Գրիգոր Մազլումեանին միտքին կնիքը: Բազում հեղինակներ, Մեծաւոր Արեւելքի եւ պատմական ու արդի Հայաստանի մասին գիրք մը հրատարակելէ առաջ կը դիմեն նրան՝ հարցնելի գիրք: Ահա թէ ինչու, մանաւանդ օտար լեզուներով իր մասին գրուեցան բազմաթիւ յօդուածներ, իր մասին յիշատակութիւններ եղան բազում գիրքերու մէջ:

Հայաստանով կարդար Պարոն Գրիգոր Մազլումեան, մինչեւ իր արդած վերջին վայրկեանը:

Մենք, չեմ ծածծեր բաւերը, մեծ մարդ մը՝ մեծ հայ մը, իրաւ հայրենասէր մը կորսնցուցինք, հայութիւնը աշխարհին կարող մարդ մը կորսնցուցինք:

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ
Լոնդոն

Երեւան

Միթե վերջին ձմեռը չէր սա...

Ջեռուցման բացակայության պայմաններում ցրտաշունչ ձմեռն անցկացրածներիս այժմ արդեն թեթեւացած շունչ քաշելու հնարավորություն է ստեղծվել, շնորհիվ գարնան ջերմության: Սակայն զարմանում է, որ մեր ոդիսականը դեռեւս ավարտված չէ եւ հավանականություն կա առավել մեծ խնդիրների «դարձը քաշելու, քանի որ, ըստ մեզ հասած տեղեկությունների, մայրաքաղաքի ջեռուցման համակարգը տնօրինող եւ դրանով զբաղվող կազմակերպության գործունեությունը, մեղմ ասած, «սառեցման» վտանգի տակ է, միաժամանակ հետո էլ—

Լուրերը ճշտելու նպատակով եղանք երեւանխորհրդի ջերմային տնտեսության արտադրական միավորումում: Միավորման տնօրեն Յու. Զոհրունցը մեզ հայտնեց, որ, իրոք, այդ հարցի առթիվ խոսակցություններն անհիմն չեն: Վերջերս կայացած մի խորհրդակցությունում (մենք կարողացանք միայն իմանալ, որ դա քաղխորհրդում չէր, այլ ավելի բարձր մակարդակներում- Գ. Ն.) նախնական խոսակցություններ են եղել ջերմային տնտեսության արտադրական միավորման հետագա ճակատագրի վերաբերյալ: Ասվել է, որ փող չկա, որ վառելիք գնվի, ոչ էլ ճանփա կա, որ բերվի: Այսինքն, նորից բնակչությանը նավթավառներով ու վառարաններով «ջեռուցվելու» առաջարկություն կարվի երեւի, եթե իրոք ջեռուցման համակարգը «ոչ ես լինի»: Իսկ եթե հաշվի առնենք, որ մեկ նավթավառի գինը եւ ամսական օգտագործվելիք վառելիքի արժեքը հսկայական գումար կկազմեն, որը մատչելի չէ գրեթե մեծամասնությանը, ապա պարզ կդառնա, որ նման ձեւով փաստորեն ձմեռը տաքանալու պարտականությունը դրվում է բնակչության ուսերին: Մինչդեռ, ինչպես մեզ հայտնեց պրն. Զոհրունցը, ջեռուցման համակարգը գործարկելու համար անհրաժեշտ է ընդամենը 15 մլրդ ռուբլի, որի դեպքում այսօրվա վիճակով քաղաքի 70 տոկոսը կարող է ջեռուցվել: Պրն. Զոհրունցն անհիմն համարեց նաեւ այն պատճառաբանությունները, թե քաղաքի ջեռուցման համակարգը բալանված է եւ ի վիճակի չէ ջեռուցում ապահովելու: Եթե մեր տնտեսությունը, որի արժեքը կազմում է 14 մլրդ ռուբլի, այսպես անտեր թողնվի, ապա միավորման տնօրենը, ապա իրոք ասիճանաբար բալանվելով ի վերջո կհասցվի մի վիճակի, երբ վառելիք լինելու դեպքում էլ չենք կարող ջեռուցել բնակարանները:

Իսկ առայժմ... Առայժմ ջերմային տնտեսության արտադրական միավորման բախտը մնում է անորոշ: Հնարավոր է, որ մյուս ձմեռ մենք տաքանանք «անորոշ» վառելանյութով: Մինչդեռ այս ձմեռը մեր վերջին ձմեռը պետք է լիներ, չէ՞... Ուրեմն, կարող է եւ ձախորդ օրերը գան ու չերթան...

Գ. Ն.

Եթե ուզում եք լավ տեսնել

«Օպտիկա» կենտրոնը կազմակերպում է տեսողության լավացման կուրսեր ըստ Բեյրսի մեթոդի: Փորձառու մասնագետները երաշխավորում են փայլուն արդյունքներ կարճ ժամանակամիջոցում: Կուրսերը կանց կացվեն հայերեն եւ անգլերեն:

☎ 34-09-61, 61-61-95
(ժամը 17:00-22:00)

Բժշկական ինստիտուտների եւ ուսումնարանների ուսանողներին

«Պարբերական» հրատարակչությունը լույս է ընծայել Վ. Դավթյանի «Հոգեբուժություն» գրքի առաջին հատորը, որը հոգեբուժության հիմնահարցերին նվիրված հայերեն առաջին աշխատությունն է: Այն հասցեագրված է առաջա բժիշկներին եւ բուժաշխատողներին, հոգեբույժներին, հոգեբաններին, փիլիսոփաներին, գրականագետներին եւ հոգեբուժության գաղտնիքների մասին խորհրդածող ընթերցող լայն շրջաններին: Գիրքը կարելի է ձեռք բերել մայրաքաղաքի կենտրոնական գրաստներում, կամ՝ զանգահարելով 23.11.25:

Տպաքանակը խիստ սահմանափակ է:

digitised by A.R.A.R.@

Էմիլիա

Պաշտոնակարգում կամ որն է անիմացության մեր սահմանը

«Ոչինչ չի ստացվի»

ՋԵՆԷԻՆԱ

Ցանկացած ասպարեզում ամենտեսակի նշանակումները եւ պաշտոնների ստանձնումը հղի է հետեւանքներով: Ամենուրեք մենք տեսնում ենք այդ հետեւանքները, հաճախ կործանարար, բայց եւ ստիպված ենք հաշվել դրանց հետ, քանի որ առանց պաշտոնակարգման հնարավոր չէ իրականացնել որեւէ միասնական գործունեություն ընդհանրապես: Մեր կյանքի քաղաքական եւ մնացած բոլոր ասպարեզներում ամեն օր տեղի են ունենում մեծ ու փոքր պաշտոնանկություններ, աշխատանքից ազատում՝ առանձին անհատների եւ հրաժարեցում՝ ամբողջ աշխատակազմի: Այս ամենին հետեւում են նոր նշանակումներ, նոր պաշտոնաբաշխություն եւ նոր... հրաժարականներ՝ կամովի կամ դրդված: Խնդիրը հանգում է ընդհանրապես անձի համապատասխանությանն իր գրաված պաշտոնին, ինչը, պետք է խոստովանել, բավական հազվագյուտ երեւույթ է: Դպրոցում, փոստատանը, խանութում, օդանավակայանում, հիմնարկներում, կառավարությունում աշխատում են մարդիկ, որոնք մեծամասամբ ընդունակ չեն որակով կատարելու իրենց պաշտոնական պարտականությունները: Եւ արդյք մենք ամեն օր չե՞նք համոզվում դրանում:

Ամենուրեք չեմ կարծում, թե բնավ չկան գիտակ եւ արհեստավարժ մասնագետներ ցանկացած բնագավառում. ինչ-որ օգտակար աշխատանք մեր շուրջ, այնուամենայնիվ, կատարվում է: Սակայն հասարակության ինքնակազմակերպման ստորակարգված (հիերարխիկ) բնույթը, ցավոք, թույլ է տալիս որոշ շեղումներ՝ մարդիկ, որոնց կանոն, զբաղեցնում են ավելի բարձր պաշտոն, քան ընդունակ են:

Այս օրինաչափությունը ժամանակին բացահայտել է կանադացի մանկավարժ, հոգեբան, գրող Լոուրենս Ջ. Պիտերը, որի հանրաճանաչ «սկզբունքը» նվաճեց քաղաքագետների երեւակայությունը, հեղինակին դասելով «աշխարհի ամենաողջամիտ մարդկանց» շարքում: «Պիտերի սկզբունքը» յուրօրինակ մի հայտնագործություն է վարչագիտության եւ կազմակերպչական կառույցների ուսումնասիրման բնագավառում. ահա այն. «Հիերարխիայում յուրաքանչյուր անձ միտում ունի բարձրանալու անիմացության իր մակարդակին»: Այլ կերպ ասած, մարդիկ բարձրանում են ծառայողական սանդուղքով այնքան, մինչեւ ստանձնում են մի պաշտոն, որին այլեւս չեն համապատասխանում մասնագիտական կամ որեւէ այլ անհրաժեշտ հատկանիշով: Ընդհանրապես մարդկային կարիերան ենթադրում է պաշտոնակարգված մի քանի աստիճանների հաղթահարում: Բացառված չէ, որ բոլոր աստիճաններում անհատը կարող է դրսեւորվել որպես բանիմաց եւ իրազեկ մասնագետ, սակայն, ի վերջո, բոլորս հասնում ենք մեր կարողությունների այն աստիճանին, երբ այլեւս չենք առանձնանում վերեւ տեղաշարժվելու համար, եւ մեր վերջին պաշտոնը, հետեւաբար, համընկնում է իմացության (իսկ ավելի ճիշտ՝ անիմացության) մեր մակարդակին: Հարկ չկա նշել, թե ինչ վնաս է կրում հասարակությունը տգետների պաշտոնավարումից: Անգամ ճիշտ նշանակումները ուղեկցվում են անուղղակի կորուստներով՝ մենք զրկվում ենք նախկին տեղում պարտաճանաչ աշխատողից, սանալով կասկածելի փոխհատուցում: Բարձր պաշտոններում անձի անհամապատասխանությունն առավել կորստաբեր է: Անվարժ կարող են գտնվել թե նախագահը եւ թե մեքենագրուհին, բայց նրանց վրիպումները հավասարազոր չեն:

Պրոյեկտ մինչեւ վերջ եւ ցնցենք մեր իշխանության այլանքներում նշանակված անձանց համապատասխանությունը կարեւորագույն պաշտոններին՝ այստեղ չի՞ գործում «Պիտերի սկզբունքը»:

Սկսենք նախագահից: Առհասարակ որեւէ անձի համապատասխանությունն իր պաշտոնին հիշտությամբ գնահատվում է այդ անձի գործունեության վերջնական արդյունքով: Դատելով մեր կյանքից, վստահորեն կարելի է ենթադրել, որ նախագահական այս պաշտոնավարումը, մեղմ ասած, հեռու է կատարելությունից: Այստեղ նույնպես գործել է վերոհիշյալ «սկզբունքը»: Մատենադարանի գիտարտուղարն իմացության իր մակարդակից (բանասիրության դոկտոր, տասը լեզուների ատոմ), շնորհիվ շատ արժանիքների ստեղ-ստեղ բարձրանում է հասարակական-քաղաքական հիերարխիայի սանդուղքով եւ ի վերջո հասնում անիմացության իր մակարդակին՝ նախագահի պաշտոնին: Որքան շատ են անհատի արժանիքները, այնքան շուտ է նա հասնում անիմացության իր մակարդակին:

«Պիտերի սկզբունքը» անողոք է եւ չունի բացառություն: Ասենք, բացառություն կազմելու առանձնաշնորհ չի տալիս նաեւ ժողովրդական հանրաքվեի միջոցով ընտրված լինելու փաստը:

Կասկած չկա, որ Հայաստանի ժողովուրդը, ինչպես հիմա ասում են, «ցախցախիչ» մեծամասնությամբ ընտրել է իր լավագույն թեկնածուին (այստեղ չափանիշը հենց ձայների մեծամասնությունն էր): Սակայն, ինչպես հասկանում, եք, այդ պաշտոնին համապատասխանելու համար բավական չէ հավակնորդներից լավագույնը լինել: Պատմությունն ունի շատ օրինակներ... Միացյալ Նահանգների նախագահներից մի քանիսն այդ պաշտոնում դրսեւորել են ցնցող անկարողություն: 1920 թվականին ձայների աննախադեպ առավելությամբ ԱՄՆ-ի 29-րդ նախագահ ընտրվեց Ուորեն Հարդինգը: Նրա վարչակազմը հավաքված խնամակալության սկզբունքով՝ ընկեր-բարեկամներից, պիտանի չէր որեւէ գործի համար: Կառավարությունը բաղվել էր կաշառակերության մեջ: Իսկ երբ ներքին գործերի նախարարը պետական նավթահանքերը վարձակալման հանձնեց իր ընկերներին, երկրում աղմուկ բարձրացավ: Նախագահ Հարդինգն ստիպված էր խոստովանել. «Ես պիտանի չեմ այս պաշտոնին, եւ հարկ չկար այն զբաղեցնելու»:

Հաճախ անկարող աշխատողը հեղինակություն է վայելում շնորհիվ անցյալում ձեռք բերած նվաճումների: Կամ՝ գործելով անհողաս ընդհանուր շահերի տեսանկյունից, նա կարող է շահել փոքրաթիվ խմբի հավանությունը եւ այդպիսով միայն համարվել բանիմաց: Նման դեպքերում ասում են, թե այս կամ այն մարդն անփոխարինելի է իր տեղում: Սրանք թվացյալ բացառություններ են:

«Եթե որեւէ անձի անիմացության մակարդակը համընկնում է նրա անփոխարինելիության մակարդակին, այդ դեպքում մենք գործ ունենք տարօրինակ անկանոնության հետ՝ անփոխարինելի անկարող աշխատողի» *(Պիտեր)*:

Դժվար չէ մտաբերել, թե ովքեր են ՀՀ իշխանություններում անփոխարինելիները: Այդպիսի պաշտոնների են նշանակվում քողարկված նախապատվության սկզբունքով, նրանց իմացությունը դրսեւորվում է հիերարխիան պահպանելու մեջ: Նույնիսկ բացահայտ անկարողությունը հիմք չի տալիս ազատվելու անփոխարինելի աշխատողից, որովհետեւ «եթե նրան հանես՝ աղետն անխուսափելի է, եթե պահես՝ չես խուսափի աղետից» *(Պիտեր)*: Այդ պատճառով էլ նման անձինք հաճախակի տեղափոխվում են պաշտոնից պաշտոն, այսինքն, անիմացության մի մակարդակից մի այլ մակարդակ: Տրամաբանությունը հուշում է, որ եթե յուրաքանչյուր պաշտոնատար անձ անիմացության իր մակարդակից իջնի մի աստիճան ներքեւ՝ ի զորու կլինի աշխատել արդյունավետ եւ արժանապատվորեն: Համենայն դեպս, մեզ հայտնի է այդպիսի մի դեպք, երբ նախկին վարչապետը նախարարի պաշտոնում բարելավեց մեր պաշտպանական գործերը:

Որոշ դեպքերում անվարժ ղեկավարը կարող է ունենալ բանիմաց օգնականներ, որոնք հաջողությամբ են կատարում իրենց պարտականությունները, աղաղակելով ընդհանուր գործի արդյունավետությունը: Երբ այդպիսի հիերարխիայում շատ են, դրական արդյունքները երկար չեն հաղորդի:

Սիրով համաձայն եմ ենթադրել, որ ՀՀ կառավարությունում առաջին օրվանից աշխատում են բանիմաց նախարարներ, պետեր եւ այլ պաշտոնատար անձինք: Ընդունենք նաեւ, որ կառավարության անդամների բազմաթիվ հրաժարականները շատ դեպքերում հետեւանք են ոչ թե անկարողության, այլ՝ համոզմունքների տարաձայնության, անձերի անհամատեղելիության եւ այլն: Այս ամենը թեպետ փրկում է պաշտոնատարներից մի քանիսի բարի համբավը, սակայն ոչ իրերի դրությունը: Բանն այն է, որ անիմացության մակարդակին հասնում են ոչ միայն առանձին անհատներ, ամբողջությամբ հիմնարկներ, պետական եւ այլ կառույցներ, կառավարություններ: Այստեղ էլ ամեն ինչ ընթանում է համաձայն «Պիտերի սկզբունքի»:

Քանի դեռ կառավարությունն իր անդամներին տալիս է լիազորություններ, իրավունքներ, արտոնություններ եւ իշխանություն, ծախսում է ձեռքի տակ ունեցած պետական միջոցները, այն ի զորու է եւ հնարավոր: Բայց երբ գալիս է ներդրածի չափով արդյունքները ստանալու պահը՝ հայտնվում է անկարողության իր մակարդակին, խորտակելով ժողովրդի լավագույն հույսերը: Այժմ, ձեռքի տակ ունենալով քանակական ցուցանիշներ, կարող ենք որոշ բանաձեւի օգնությամբ հաշվարկել ՀՀ կառավարության արդյունավետության գործակիցը: Եթե որեւէ մեկին դուր չի գալիս կառավարության գործունեությունը գնահատելու նման եղանակը, այդ դեպքում ստիպված եմ առաջարկել քաղաքակիրթ աշխարհում ընդունված չափանիշները. բնակչության կենսամակարդակը, մահացության եւ ծնելիության, հանցագործությունների եւ դրանց բացահայտման, ազգային համախառն արտադրանքի եւ պետական հարկերի տոկոսային հարաբերությունները, նույնիսկ կյանքի միջին տեւողությունը եւ ճանապարհների անվտանգությունը: Պարզ է, որ մեր կառավարության գնահատականը վերոնշված եւ ոչ մի կետում համադրելի չէ: Իմացության նրա մակարդակը լավագույն դեպքում սահմանափակվում է ժողովրդի գոյապահպանման եւ անվտանգության տարրական պահանջներով, որոնք ապահովվում են մեծ դժվարությամբ, երբ չասենք ասծո օգնությամբ:

Ոչ միայն մարդիկ, այլեւ պետական կառույցներն են երբեմն հաղթում անկարողության իրենց մակարդակին, խորտակվող նավի պես ներառելով երախում կարող-անկարող բոլոր անդամներին: Հետեւապես չկա եւ ոչ մի արգելք, որ մի ամբողջ երկիր-պետություն իր ժողովրդի հետ միասին նույնպես հայտնվի անիմացության իր մակարդակին: Պատմության մեջ շատ են այդպիսի դեպքերը:

«Օտարերկրյա տիրապետության տակ, առավել զորեղ ազգերի ղեկավարությամբ բարգավաճող որոշ ժողովուրդներ անկարող գտնվեցին ինքնակառավարման պայմաններում: Ուրիշ ժողովուրդներ, հաջողությամբ վարելով իրենց գործերը, քանի դեռ քաղաք-պետություն էին, հանրապետություն կամ միապետություն՝ անկարող դարձան գոյատեւել, երբ ստեղծեցին կայսրություն: Զրկանքների եւ դժվարությունների մեջ ծաղկող քաղաքակրթություններն անընդունակ գտնվեցին հաջողության եւ առատության բերը կրելու» *(Պիտեր)*: Այս մեջբերման առաջին նախադասությունը վերաբերում է հայ ժողովրդին: Ավաղ՝ Հայաստանը, ձեռք բերելով անկախություն եւ ինքնուրույնություն, հայտնվեց անիմացության իր մակարդակին: Բոլորս՝ նախագահից մինչեւ վերջին գործազուրկը, դարձանք անիրազեկ մեր նոր կարգավիճակում: Մենք ի զորու չենք կատարելու մեր նոր պարտականությունները, որովհետեւ արդել ինքնուրույն խելքով եւ կառուցել կանոնավոր պետություն՝ առայժմ չգիտենք:

Մենք հույս ունենք, որ շնորհիվ մեր ժողովրդի աշխատասիրության, բնատուր ընդունակությունների եւ, իհարկե, աստծո կամքի, կհաղթահարենք ժամանակավոր դժվարությունները եւ շուտով կկանգնենք աշխարհի զարգացած պետությունների կողքին: Սակայն թույլ տվեք հիշեցնել, որ ազգերի եւ ժողովուրդների պատմական զարգացման ուղին նույնպես ստորակարգված է եւ նման սովորական սանդուղքի. անկարող եւ թույլ ազգերը սայթաքում են վար:

Հ. Գ. «Պիտերի սկզբունքը» ճանաչվել է ամբողջ աշխարհում՝ անկախ ազգությունից, դավանանքից, քաղաքական համակարգից: Երջանիկ կլինեի, եթե այս հոդվածի օգնությամբ Պիտերի ողջամտությունը թեկուզ մի լուցկու լույս սփռեր մեր մոլորության խավարում՝ ոտքերի տակ հենարան գտնելու համար: Եւ եթե հոդվածում տեղ գտած թերությունների համար պատասխանատու եմ միայն ես, ապա արժանիքներն ամբողջությամբ պիտի վերագրեմ կանադացի մանկավարժ եւ հոգեբան Լոուրենս Պիտերին:

ԱՐՍ ՇԻՐԻՆՅԱՆ

Վրաստան

Կիսովանին սպառնում է ռուսներին

Վրաստանի պաշտպանության նախարար Թենգիզ Կիսովանին հայտարարեց, որ եթե Ռուսաստանի օդանավերը կրկին փորձեն հարված հասցնել Սուխումին, ապա կխփվեն Վրաստանի հակաօդային պաշտպանության միջոցների կողմից: Երեկ ԻՏՆ-ին տված հարցազրույցում նա Սուխումի եւ քաղաքի մոտ տեղակայված վրացական դիրքերի վրա Ռուսաստանի ռազմաօդային ուժերի Սու-25 օդանավերի ապրիլի 1-ի հրթռային հարվածը որակեց որպես երկու պետությունների միջեւ հարաբերությունների սրմանը եւ ռուս-վրացական բանակցությունների տապալմանն ուղղված գործողություններ:

Թ. Կիսովանիի խոսքերով, նա պայմանավորվել է Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաչովի հետ ապրիլի 6-ին Սոչիում հանդիպելու վերաբերյալ: Այդ հանդիպմանը նախատեսվում է քննարկել, մասնավորապես, երկու պետությունների ղեկավարներ Բորիս Ելցինի եւ Էդուարդ Շեւարդնաձեի հանդիպման նախապատրաստական հարցերը: Բացի այդ, նշեց Թ. Կիսովանին, խոսք կգնա նաեւ ռազմական խնդիրների մասին: Նրա խոսքերով, Պ. Գրաչովը համաձայն է Աբխազիայի ռազմական գործողությունների զոհաց Վրաստանի այլ շրջաններ Ռուսաստանի զորքերը դուրս հանելու անհրաժեշտության հետ: Վրաստանի նախարարը գտնում է, որ Աբխազիայի հիմնահարցը հնարավոր է լուծել միայն խաղաղ ճանապարհով: Դրա հետ մեկտեղ նա նշեց, որ Աբխազիայի խորհրդարանի ղեկավար Արծինբան խուսափում է բանակցություններից: «Ըստ երեւույթին, նա դեռ հույս է դնում Ռուսաստանի ռազմական օգնության վրա», ենթադրեց Թ.Կիսովանին: ՌՅ

digitised by A.R.A.R.@

Հանդիպում

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՈՒԺԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է

Այս մարդու մասին ամենաարբեր կարծիքներ գոյություն ունեն՝ թատրոնի ռեժիսոր, որն իր գործով չի զբաղվում, խոշոր ինտելեկտուալ, սոցիոլոգ եւ քաղաքականագետ, առաջնորդների գաղտնի խորհրդական, ռուսական ընդդիմության գլխավոր գաղափարախոսներից մեկը եւ այլն: ՍԵՐԳԵՅ ԿՈՒՐԴԻՆՅԱՆ: Բնիկ մոսկվացի է: Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու: «Տեատր նա դոսկախ» թատրոնի գլխավոր ռեժիսոր: «Փորձարարական ստեղծագործական կենտրոն» կորպորացիայի նախագահ: Նրա շատ մտքեր Հայաստանում կարող են ընդունվել կամ չընդունվել: Սակայն, ինչ արած, այդպիսին է նա՝ մեր այսօրվա զրուցակից Սերգեյ Կուրդինյանը:

– Պրն. Կուրդինյան, Դուք գիտե՞ք, որ Ձեր անվան շուրջը հակասական խոսակցություններ են ոլորվում:

– Այո:

– Եւ ինչպես եք արձագանքում դրանց:

– Շատ հանգիստ: Դա ուրիշների գործն է:

– Իսկ Ձեր համակողմանի ինտելեկտուալ գործունեության ո՞ր ասպարեզն է Ձեզ համար գլխավորը:

– Որոշակի տիպի ինտելեկտուալ թատրոնն ինձ համար մնում է գլխավորը: Ընդամենը, թատրոն ասելով ես չեմ հասկանում սոսկ մշակութահանդիսային ձեռնարկություն: Մենք գտնվում ենք 21-րդ դարի շեմին, եւ խաղ հասկացությունը դառնում է աշխարհաքաղաքականության հիմնարար սկզբունքներից մեկը: Եթե ուշադիր նայենք, նախկին ԽՍՀՄ տարածքում, օրինակ, արդեն ուրվագծվել է նոր որակի աշխարհաքաղաքական խաղ: Եւ մեծ հարց է առաջանում՝ արդյոք սա՞ է ղեկավարությունը: Ահա եւ խաղի ու ղեկավարության այդ ընդդիմության մեջ ես փորձում եմ ընկալել 20-րդ դարը: Եւ թատրոնն ինձ հետաքրքրում է որպես խաղերի հետազոտման լաբորատորիա:

Բացի այդ, ինձ միշտ հետաքրքրել է նաեւ այն ավանդների ընտրությունը, որ միավորել է Ռուսաստանի ղեկավարության տարբեր փուլերը հին ժամանակներից մինչեւ մեր օրերը: Նման ավանդույթները, եթե հոգեւոր են, ղեկանջում են ըմբռնման յուրահատուկ մեթոդներ: Մենք պիտի հասկանանք, որ գոյություն ունի ռուսական ավանդականություն, որն արտաքնապես ընդհատուն է, իսկ ներքուստ՝ խիստ համաձայնեցված ու բավականին կուռ: Պատմական ընթացքի նման ինքնաշիջ փորձը դժվար է ենթարկել դասական տեքստային ուսումնասիրման: Իսկ իմ թատրոնն ինձ հնարավորություն է տալիս կատարել ղեկավարության հոգեբանական հիմնարար հետազոտություններ: Նա լիովին միավորում է իմ կյանքի բոլոր բաղադրամասերը:

– Իմ հաջորդ հարցը շատ ավելի առօրեական է: Ասացեք, խնդրեմ, Ձեզ ինչո՞ւ են համարում առաջնորդների գաղտնի խորհրդական:

– Ես այդպիսին երբեք չեմ եղել, դրանք դատարկաբանություններ են, որ տարածում են իմ քաղաքական հակառակորդները: Այսպես կոչված ժողովրդավարական կողմնորոշման ուժերին ձեռնտու չէ հակադիր ճամբարում տեսնել իրենց դիմակայելու ունակ որեւէ ինտելեկտուալ դեմքի: Ավելին, «գաղտնի» չէի կարող լինել, որովհետեւ դեռեւս 1988 թ. ես հիմնադրեցի «Փորձարարական ստեղծագործական կենտրոն» կորպորացիան, որտեղ հեղինակավոր մասնագետները միանգամայն «լեգալ» զբաղվում են սոցիոլոգիական, քաղաքական, գիտական եւ այլ հետազոտություններով ու կանխատեսումներով: Ի դեղ, մինչեւ կենտրոնի ստեղծելը ես որեւէ մեկի հետ քաղաքական երկխոսության մեջ չեմ մտել:

– Սակայն ասում են, որ Գորբաչովը մի անգամ Քաղբյուրոյում առաջարկել է Ձեր կենացը: Գուցե Ձեր «Հեռվերակառուցում» նշանավոր գիրքը կարդալուց հետո՞:

– Նման բան եղել է, բայց թե ինչից հետո, չգիտեմ: Այդ մասին ինձ ասաց Քաղբյուրոյի անդամներից մեկը: Իմիջիայլոց, ամեն ինչ սկսվեց այդ «գորբաչովյան» միջադեպից: Դա ծանծաղալի պատմություն է:

– Լավ, եկեք խոսենք առավել հրատապ հարցերի շուրջ: Դուք ներկայիս ռուսական ընդդիմության աչքի ընկնող գործիչներից եք: Դուք որպես հայ Ձեզ ճնշված չե՞ք զգում այդ մարդկանց շրջապատում, նրանց հավաքներում, քաջատեղյակ լինելով, որ նրանց մեջ բավականին ուժեղ են հակահայկական տրամադրությունները: Ընդդիմության մամուլի էջերում հայերիս հաճախ ցեխին են հավասարեցնում: Անկեղծ ասած, երբեմն սարսուռ ես զգում այն մտքից, որ նացիոնալ-հայրենասիրական այդ ուժերը կարող են իշխանության գալ:

– Եկեք նրանց մեղադրելուց առաջ քննարկենք հայերիս գործողությունները: Ռուսական կայսրության դեմ իր անխոնջ, հակամարտությունների ու ընդվզումների շրջանում հայ մտավորականության մեջ չգտնվեց մի ուժ, որը հակառակվեր Տեր-Պետրոսյանի ու նրա համախոհների քաղաքականությանը:

– Ինչու, կային սպան մտածող շատ մարդիկ, որոնք զգուշացնում էին, որ հզոր գերտերության դեմ «առաջինը» ելույթ ունենալը կարող է ազգի համար աղետալի հետեւանքների հասցնել: Բայց ո՞վ էր նրանց լսում: Այնքան էժանագին պոպուլիզմ, կեղծիք ու ամբարտավանություն կար երբեմնի, այսօր արդեն կարելի է ասել, տխրահռչակ հանրահավաքներում:

– Ահա եւ ռուսական լսարանին հայերի կողմից որեւէ հակադիր տեսակետ չներկայացվեց: Այն տպավորությունն էր ստեղծվել, որ ամբողջ Հայաստանը հետեւում է Տեր-Պետրոսյանին: Նույնիսկ այսօր էլ, երբ ներկայիս վարչակարգի դեմ կան սրբափ ընդդիմադիր ուժեր՝ դաշնակները, ռամկավարները եւ այլն, ոչ ոք չի փորձում ակտիվորեն դուրս գալ Ռուսաստանի լրատվական տարածություն: Եթե Ռուսաստանի հայրենասիրական ուժերը լսեն նաեւ որիշ ձայն, հնարավոր է, որ փոխեն վերաբերմունքը:

Ես մի գործոն: Գոյություն ունի փոքր ազգի բարդույթը. նա միշտ համակ ուշադրությամբ հետեւում է հզոր կենտրոնին՝ ինչ է անում նա, ինչ է կատարվում այնտեղ եւ այլն: Եթե այդ կենտրոնում տեղի են ունենում խմորումներ, փոքր ազգը ոչ միայն ջերմեռանդորեն հետեւում է նրան, այլեւ հաճախ փորձում է առաջ անցնել: Կոնկրետ դեպքում, երբ կենտրոնը սկսեց քայքայել երկիրը, հայերը հայտնվեցին «առաջամարտիկների» դիրքերում: Փոքր ղեկտրության հարմարվողական քաղաքականություն, որը ստրատեգիական ուղի չէ:

– Սակայն լուրջ մարդիկ հասկանում են, որ հայերը չքայքայեցին ԽՍՀՄ-ը:

– Անշուշտ, երկիրը քայքայեց Գորբաչովը: Բայց ցավն էլ հենց այն է, որ հայերն ակտիվ դեր խաղացին այդ գործում, որի դիմաց հիմա դաժանորեն հատուցում են: ԽՍՀՄ ներսում կային որոշակի ուժեր, որոնք շահագրգռված էին հզոր ժեր, որպեսզի շահագրգռված էին հզոր ժեր, որոնք շահագրգռված էին հզոր ժեր, որոնք շահագրգռված էին հզոր ժեր, որոնք

Շվեդիա

Տնտեսական ճգնաժա՞մ

Շվեդացիներն այսուհետեւ հավանաբար կասանան սոցիալական ապահովության ավելի նվազ նպաստներ, եւ կվճարեն ավելի բարձր գումարներ՝ աշխատանքի եւ առողջապահական ապահովագրությունների համար: Երկար ժամանակ որպես բարեկեցիկ պետություն ճանաչված Շվեդիան, որտեղ գործազրկություն գրեթե չկար, դժվարին օրեր է ապրում ներկայումս: Նրա տնտեսությունը լուրջ անհանգստություն է պատճառում մասնագետներին եւ կառավարող շրջանակներին:

Բյուջեի բացն այս ֆինանսական տարում կհասնի մինչեւ 13,9 տոկոսի: Բանկերն այնքան արագ են դրամ կորցնում, որ միայն կառավարության կողմից նրանց հատկացված օգնության շնորհիվ է, որ կարողանում են պահպանել իրենց գոյությունը: Եւ ըստ Ստար Լինդբեկի գլխավորած տնտեսագետների խմբի մարտի 9-ին հրապարակված զեկուցագրի, դեռեւս աղասվում են ավելի վատթար օրեր:

Զեկուցագիրը դասապարտում է «տասնյակ տարիների ընթացքում գործված սխալները», որոնցից կենսապահովման միջոցների հարուցուն աճը, արհմիությունների իշխանության ուժեղացումն ու բարձր աշխատավարձերը երկիրը կանգնեցրին դրամի կրկնվող արժեզրկման եզրին:

Միայն 1989-92 թթ. ընթացքում արդյունաբերական արտադրանքի ծավալը նվազել է 15 տոկոսով, բնակչության զբաղվածությունը՝ 27 տոկոսով: Եթե հաշվենք նաեւ մասնագիտական որակավորում ստացող անհատներին, որոնք ժամանակավորապես չեն աշխատում, այժմ աշխատուժի 12 տոկոսը փաստորեն անգործ է: Կրոնը (տեղական դրամը) անցած նոյեմբերից ի վեր էմյուի համեմատ արժեզրկվել է 21 տոկոսով:

Զեկուցագիրն առաջարկում է «լավ» բանկերը վերավաճառել նոր բաժնետերերին, որոնք կկարողանան արագ կերպով շտկել դրությունը: Այն կոչ է անում ավելի մեծ քաղաքական բարեփոխումների: Պահանջվում է կենտրոնական բանկի լիազորությունների ընդլայնում եւ արհմիությունների սահմանափակում: Խորհրդարանի իրավասությունների ժամկետը շատ կարճ է (ընդամենը 3 տարի), իսկ կառավարությունը շատ թույլ է պատգամավորական խմբակցությունների հանդեպ: Մյուս կողմից, ֆինանսների նախարարությունն անզոր է այնպիսի նախարարությունների դիմաց, որոնք անխնա ծախսում են:

Կկարողանա՞ն զեկուցագրում ներկայացված առաջարկները դուրս բերել երկիրը սպառնացող ճգնաժամից, ժամանակը ցույց կտա: Համենայն դեպս, մասնագետները կասկածում են դրանում: Մարտի 10-ին սոցիալ-դեմոկրատական խմբակցությունը խորհրդարանում կառավարության ներկայացրած բյուջեի նախագիծը եւ ուղարկեց վերանայման, իսկ Լինդբեկը ամսագրի առաջիկայում ներկայացավ մրմրալով՝ «Միայն սատանան գիտի՝ երկիրը կարելի է փրկել, թե ոչ»: ■

Լատվիայում ստեղծվել է եւս մեկ կուսակցություն՝ հիմարների կուսակցություն: Դրա կարգախոսն է. «Հիմարության, ինչպես որ արվեստի համար, սահմաններ չկան: Եթե մենք, թե մյուսը պատկանում են ժողովրդին»: Կազմակերպության հիմնական խնդիրն է Լատվիան դարձնել հրաշալի իրավական պետություն: Կանոնադրության համաձայն, կուսակցությանը կարող են անդամակցել Լատվիայի 18 տարին լրացած քաղաքացիները, անկախ ազգությունից, մաշկի գույնից, կրոնական համոզմունքներից եւ սեռական կողմնորոշումից: Կուսակցությունը պայքարում է Սեյմում տեղեր ստանալու համար. փաստորեն հենց այդ նպատակով էլ հարկ եղավ այն գրանցել սահմանված կարգով: Սնարք

Լեհաստան

Բացառված չէ, որ Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի նախագահների առաջիկա հանդիպման օրակարգի հարցերից մեկը դառնա ոլորտային զենքի փորձարկման «Trust» («Վստահություն») համատեղ գիտափորձի անցկացման խնդիրը: Այս նախաձեռնությամբ հանդես են եկել Ռուսաստանի մի խումբ գիտնականներ, իսկ ավելի ուշ նախագծի իրականացումը «նպատակահարմար» է համարվել կառավարության անդամների գրություններում:

ՊԼԱԶՄԱՅԻՆ ԶԵՆՔԻ ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՓՈՐՁԱՐԿՈ՞ՒՄ

Այսպես կոչված ոլորտային զենքը, որի հետազոտությունները գաղտնաբար կատարվում էին Ռուսաստանում եւ ԱՄՆ-ում, անհաղթահարելի խոչընդոտ է ստեղծում հրթիռների եւ ինքնաթիռների համար: «Զենքի վերգետնյա համալիրների ուղղորդած էներգիան կենտրոնանում է ոչ թե նպատակակետի կառուցվածքի վրա, այլ դրա թռիչքի ուղեգծում գտնվող մթնոլորտի հատվածում, խոնացնում է այդ հատվածը եւ լիովին խախտում թռիչքի աերոդինամիկան: Թիրախը դուրս է բերվում հետագծից եւ քայքայվում հրեավոր գերբեռնվածությունների հետեւանքով, պատմեց ոլորտային զենքի հեղինակներից մեկը՝ փորձարարական ֆիզիկայի միջուկեական ինստիտուտի գլխավոր տնօրենի տեղակալ Ռիմիլի Ավրամենկոն: Այդ ներգործությանը չեն կարող հակազդել ոչ հրթիռը, ոչ դրա գլխամասը, ոչ էլ ինքնաթիռը»:

Ռուսաստանցի գիտնականներն առաջարկում են հիշյալ գիտափորձը բնական պայմաններում անցկացնել ԱՄՆ-ի խաղաղօվկիանոսյան Քվաջելեյն օդակայան զինափորձարանում: Նախագծով նախատեսվում է, որ ռուսական կողմը կդպատրաստի անհրաժեշտ սարքերը: Ընդսմին ենթադրվում է ԱՄՆ-ի բաժնեհասային ֆինանսավորում (300 միլիոն դոլար): Այնուհետեւ ռուսական ավիակիրը սարքերը կհասցնի Քվաջելեյն զինափորձարանի շրջան: Բուն փորձարկումների նպատակը կլինի այն հրթիռների ոչնչացումը, որոնք ռուսներն ու ամերիկացիները կարձակեն մի քանի տասնյակ կմ բարձրության վրա:

Ռուսաստանցի գիտնականների այս նախագիծը ռազմավարական պաշտպանական նախաձեռնության այլընտրանքն է: Լաբորատոր եւ վահանակային փորձարկումները ցույց տվեցին, որ դա թույլ է տալիս հարձակման միջոցների տեխնիկական առավելության բազմամյա ժամանակաշրջանից խաղաղ գոյակցության անցնել պաշտպանության «հովանոցների» ներքո, որոնք հուսալիորեն պաստպարում են հրթիռային եւ ավիացիոն հարձակումից եւ այդ հարձակումը միանգամայն անիմաստ դարձնում ռազմամոլների համար: Սակայն առաջարկվող նոր զինատեսակի արդյունավետության վերաբերյալ միանշանակ պատասխան կարող է ստացվել միայն բնական պայմաններում փորձարկումների անցկացումից հետո, որոնց թանկության եւ հաջողության անորոշության պատճառով ոչ Ռուսաստանը, ոչ էլ ԱՄՆ-ը առայժմ չեն համարձակվում անցկացնել դրանք, ասվում է Ռուսաստանի արդյունաբերության պաշտպանական ճյուղերի կոմիտեի փոխնախագահ Յուրի Գլիբինի Ռուսաստանի փոխվարչապետ Գեորգի Խիժային գրած նամակում:

ԱՐՄԵՆՊՐԵՍ ՐՏԱՌ-ՏԱՍՍ

ԱՄՆ

Սենատորները գոհ են իրենց նախագահից

CNN հեռուստաընկերությանը տված հարցազրույցում սենատոր Լուգարը հայտարարեց. «Նախագահ Քլինթոնը պատմական որոշում ընդունեց, հերթական քայլը կատարելով Ռուսաստանի հետ ոչ այնքան գործնական, որքան բարեկամական հարաբերությունների հաստատման ուղղությամբ: Վարչակազմի ղեկավարը կարող էր միանգամայն այլ դիրք բռնել, որն ուղղված կլիներ Ռուսաստանի մասնատմանը: Դրա փոխարեն Քլինթոնը ցույց տվեց, որ ԱՄՆ-ը շահագրգռված է այդ երկրի միասնությամբ եւ քաղաքական կայունությամբ: Նա հասկացրեց, որ ինքն ուզում է Արեւմտյան աշխարհի ղեկավարի դեր խաղալ ժողովրդավարական գործընթացներին աջակցելու հարցերում, հասնել այն բանին, որ Յորկյակը կոնկրետ ավանդ ներդնի տնտեսական ընդհանուր օգնության մեջ»:

Սենատոր Լեհին նշեց. «Նախագահ Քլինթոնը միանգամայն ճիշտ դիրք բռնեց. երբ արեւավ սկսեց, որի ընթացքում փորձում է ամերիկյան ժողովրդին պարզաբանել, թե ԱՄՆ-ը Մոսկվային օգնելով, ներդրում է կատարում իր ապագայի, ԱՄՆ-ի ազգային անվտանգության մեջ: Արտաքին քաղաքականության բնագավառում չկա ավելի կարեւոր խնդիր, քան հարաբերությունները Ռուսաստանի հետ:

Վանկուվերի հանդիպումը կարեւոր է նաեւ այն պատճառով, որ դրանից հետո Տոկիոյում հավաքվելու է Մեծ յոթնյակը, որպեսզի ճնշարկի Ռուսաստանի բարեփոխումներին աջակցելու ուղղությամբ Արեւմուտքի հետագա քայլերը, գնահատական տա նախագահ Քլինթոնի առաջարկություններին: Եթե Վանկուվերի հանդիպումը հաջող լինի, ապա կարելի է հաջողություն ակնկալել նաեւ Տոկիոյում: Այժմ գլխավոր խնդիրն է Ռուսաստանի համար ընդունել նոր եւ որեւէ խոչընդոտով չպայմանավորված առեւտրի կանոններ»:

Երկու սենատորներն էլ հավաստեցին, որ Ռուսաստանին տրվելիք տնտեսական օգնության միջոցառումները զույգ կուսակցությունների հավանությունը կստանան ԱՄՆ-ի կոնգրեսի երկու պալատներում:

ԱՐՄԵՆՊՐԵՍ-ՐՏԱՌ-ՏԱՍՍ

ՄԱԿ

Շարունակվում է UNIDO-ի վերակազմավորումը

ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) նոր ղեկավար Մառիսիո դե Մարիա ի Կամպոսը (Մեքսիկա) ՄԱԿ-ի այդ մասնագիտացված հաստատության Վիեննայում կայացած ամսուլի ասուլիսում արտահայտվել է դրա կառուցվածքային հետագա փոփոխությունների օգտին:

Կազմակերպության գործունեության կառուցվածքային վերափոխման էությունը դրա վիրխարի ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացումն է, որը հիմնված է կազմակերպության փորձագետների եւ աշխատակիցների անչափ մեծ դրոֆեսիոնալիզմի վրա, նշել է Մ. դե Մարիա ի Կամպոսը: Կազմակերպության գլխավոր խնդիրն առաջվա պես զարգացող երկրներին տեխնիկապես աջակցելն է, որի նպատակն արդյունաբերականացման առաջացումն է: Սակայն, նկատի ունենալով կազմակերպության ֆինանսական միջոցների սահմանափակությունը, հարկավոր է մշակվող նախագծերի իրականացման գործում առավել ակտիվորեն ներգրավել հատկացումների արտաբյուջետային աղբյուրները, այդ թվում մասնավոր ներդրողներին եւ միջազգային վարկաֆինանսական հիմնարկներին, որոնցից է Համաշխարհային բանկը:

UNIDO-ի ղեկավարն ուշադրություն է հրավիրել կազմակերպության ֆինանսական ծանր վիճակի վրա, որը կապված է անդամ պետությունների կողմից բյուջեում կատարվող վճարումների ծգծգումների հետ: Վերջին 6 տարում պարտքի ընդհանուր գումարը գերազանցել է 130 միլիոն դոլարից:

ԱՐՄԵՆՊՐԵՍ ՐՏԱՌ-ՏԱՍՍ

Ռուսաստան

Հանդարտությունը խաբուսիկ

Ինչպես գրում է **«Շտուգարտեր ցայտունգ»** թերթը, «Մոսկվայում ժողովրդագամավորների բուռն համագումարից հետո սկսված անդորրն անչափ խաբուսիկ է: Ամբողջ Ռուսաստանում խոր ճեղքվածք է ստեղծվել: Մոսկվայում իշխանության պայքարը չի ավարտվել, այն միայն հանդարտվել է: Ավելին, այն սպառնում է երկիրը նետել անդունդ, քանի որ նախնաառաջ պետական հաստատությունների միջեւ մղվող այդ պայքարը հանգեցնում է այնպիսի իրավիճակի ծագման, որը հնարավոր է դարձնում զալ վերահսկողությունից, երկրորդ, դա հասարակության կազմալուծում է առաջացնում արմատական վերափոխումների ժամանակաշրջանում, երբ հարկավոր են արագ եւ ճկուն գործողություններ:

Դատելով ըստ ամենայնի, ներկա պայքարում հակառակորդներից ոչ մեկը բավարար ուժ չունի հաղթանակ տանելու: Եւ մինչ Մոսկվայում շարունակվում են անդադար եւ ինքնասպան վեճերը, սկսում է տրոհվել վիրխարի ու բազմազգ ռուսական կայսրությունը: Կկարողանա՞ արդյոք Արեւմուտքը Ռուսաստանին օգնել գտնելու ճիշտ ուղի»:

Ինչպես գտնում է **«Ֆայնենշըլ թայմզ»**ը, «Ներկա պահին Արեւմուտքը ճիշտ է վարվում, որ սահմանափակվում է Ռուսաստանի բարեփոխումների բանավոր պաշտպանությամբ: Նախագահի եւ հակառակորդների միջեւ ստեղծված իշխանության հավասարության անկայունությունը վկայում է այն բանի կասկածելիության մասին, թե բարեփոխիչները կկարողանան անշեղորեն իրենց կուրսով ընթանալ նույնիսկ Արեւմուտքի օգնությունն ստանալու դեպքում: Արեւմուտքի երկրներն իրավացի են, երբ զգուշավորություն են դրսեւորում, բայց նրանք հազիվ թե իրավացի լինեն, եթե այսուհետեւ էլ անգործունյա մնան: Ռուսաստանի բարեփոխումների ծրագրի հաջողությունն այժմ հավասարապես կախված է ինչպես բուն բարեփոխիչներից, այնպես էլ արդյունաբերական յորնյակի երկրների ընդունելիք որոշումներից: Նրանք պետք է առաջիկա շաբաթներն օգտագործեն Ռուսաստանի կառավարության ներկայացուցիչների հետ մեկտեղ տնտեսական համատեղ ռազմավարություն մշակելու համար»:

ԱՐՄԵՆՊՐԵՍ ՐՏԱՌ-ՏԱՍՍ

Լուրերի Հոսք

ՀԱՀ-ի համար նոր սահմանադրություն

Հարավ-Աֆրիկյան հանրապետության հետապարտհիդյան շրջանի համար նոր սահմանադրության մշակման գործն սկսվեց երեկ, Յոհաննեսբուրգում, երկրի քաղաքական 20 խմբավորումների մասնակցությամբ, ներառյալ սպիտակամորթների Ազգային կուսակցության եւ սեւամորթների Աֆրիկյան ազգային կոնգրեսի ներկայացուցիչները: Փաստորեն սահմանադիր այդ ժողովը ծրագրելու է նաեւ ՀԱՀ-ի առաջին ազգամավարական ընտրությունների անցկացման կերպն ու ժամկետը: Դրանք կարող են կայանալ առաջիկա տարի: Երեկ կայացած խոսակցությունների գլխավոր հարցն էր սպիտակամորթների դեմ վերջերս սաստկացած վայրագությունների կանխման հարցը:

Հնդիկ նախարարը մեղադրել է Պակիստանին

Հնդկաստանի Մահարաշտրայի նահանգի ոստիկանությանը հաջողվել է բացահայտել եւ ձերբակալել այն խմբի գրեթե բոլոր անդամներին, որը մարտի 12-ին մի շարք պայթյուններ էր կազմակերպել Բոմբեյում: Այդ մասին այստեղ հայտարարեց նահանգի գլխավոր նախարար Շարադ Փավարը: Նրա խոսքերով, նահանգի կառավարությունն ապացույցներ ունի, որ Պակիստանի հատուկ ծառայությունները մեղսակից են այդ ահաբեկչական քայլին, որի հետեւանքով զոհվել է մոտ 300 եւ վիրավորվել ավելի քան 1200 մարդ: Շարադ Փավարի կարծիքով, Հնդկաստանն իրավունք ունի պահանջելու, որ միջազգային ընկերակցությունը Պակիստանին ահաբեկիչ պետություն հայտարարի: Որպես կանոն, դա հանգեցնում է ՄԱԿ-ի քաղաքական եւ տնտեսական պատժամիջոցների կիրառմանը: Սնարք

Առաջնային է Ռուսաստանի ամբողջականությունը

Նախագահ Բորիս Ելցինը բարոյապես պատասխանատու է դաշնակցային պայմանագիրը, բայց նրա շրջադարձը հապաղում է մշակել այն քաղաքական-իրավական մեխանիզմը, որի միջոցով հնարավոր կլիներ իրականացնել այդ փաստաթուղթը: Հոկտեմբերի օրը դաշնակցային պայմանագրի կնքման առաջին տարելիցին նվիրված մամուլի ասուլիսում այս հայտարարությունն արեց Ռուսաստանի ԳԽ ազգությունների խորհրդի նախագահ Ռամազան Աբդուլատիպովը: Նա հայտնեց, որ նույն օրը նախագահ Ելցինի հետ իր հանդիպման ընթացքում ճշտարկվել են Ռուսաստանի տարածքային ամբողջականության հարցերը: Աբդուլատիպովը նաեւ նշեց, որ դաշնակցային պայմանագրի իրագործման համար հարկավոր է իրավական հիմք ստեղծել ավելի քան 100 օրենքներից: Ռուսաստանին միանալու Աբխազիայի ԳԽ դիմումի կապակցությամբ Աբդուլատիպովը նշեց. «Մենք մտադիր չենք Աբխազիան եւ Հարավային Օսիան անջատել Վրաստանից եւ հանդես ենք գալիս Հյուսիսային Կովկասի իրադրության կարգավորման օգտին»: ԻՏ

Սեփական վալյուտան չափազանց վտանգավոր է

Մարտի 31-ին Ղազախստանի ԳԽ-ը Հանրակցության պետություններից առաջինը վավերացրեց ԱՊՀ կանոնադրությունը: Նույն օրը հողագործ-պաշտպանների հետ տեղի ունեցած խորհրդակցությունում նախագահ Նազարբաեւը նշեց, որ ԱՊՀ կանոնադրությունը ստորագրած պետությունների ղեկավարները պետք է ամենամոտ ժամանակներս հավաքվեն «կանոնադրության գաղափարներն իրականացնելու համար»: Ն. Նազարբաեւը գտնում է, որ այժմ գլխավոր խնդիրն է «ստեղծել ԱՊՀ պետությունների կանոնավոր բանկային միություն եւ անցկացնել համաձայնեցված վարկաֆինանսական քաղաքականություն՝ օրինաչափ արժեքը համատեղ բարձրացնելու համար: Եթե դա չհաջողվի, ապա, նախագահի կարծիքով, «Ղազախստանին մնում է մեկ ելք. մտցնել սեփական վալյուտա»: Սակայն դա «չափազանց վտանգավոր է», նշեց նա: ԻՏ

digitised by A.R.A.R.@

Լուրերի Հոսք

Քիշնեւում հացադուլը շարունակվում է

Հինգերորդ օրն է, ինչ Քիշնեւում շարունակվում է Պրիդնեստրովիեի զինված հակամարտության մասնակիցների հացադուլը: Շորեքշաբթի օրը հացադուլավորների թիվն արդեն հասել էր 120-ի: Նրանք տեղավորվել էին Մոլդովայի կառավարության շենքի կենտրոնական մուտքի աջեւ խփված 12 վրաններում: Նախկին կամավորները կառավարությունից պահանջում են կասեցնել սեփական որոշումը մարտական գործողությունների մասնակիցներին արտոնություններ տալու, նրանց կացարանով եւ հողամասով ապահովելու վերաբերյալ: Մարտի 31-ին հացադուլի մասնակիցները կառավարությունից պահանջեցին, որպեսզի նա հասնի Տիրասպոլի բանտում պահվող 5 կալանավորների ազատմանը: Նրանց բոլորին մեղադրում են Պրիդնեստրովիեի մոլդովական հանրապետության դեմ ահաբեկչություն կատարելու համար: ԻՖ

Կստեղծվի ֆինանսական ագրոբուկա

Ղազախստանի Ակմոլ խաղաքաղաքում մարտի 29-ի խորհրդակցության ընթացքում նախկին ԽՍՀՄ 11 հանրապետությունների ագրարային հատվածների ղեկավարների ստորագրած միջպետական համագործակցության համաձայնագրի նախագիծն առաջին քայլն է այդ պետությունների միասնական ագրարային շուկայի ստեղծման ուղղությամբ: Այս մասին հայտարարեց Ռուսաստանի փոխվարչապետ Ա. Շավերդիախան հանդիպման արդյունքներին նվիրված մամուլի ասուլիսում: Նա վստահություն հայտնեց, որ միասնական ագրարային շուկան կարող է ստեղծվել ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդում համաձայնագրի նախագծի քննարկումից հետո: Շավերդիախան հայտարարեց, որ Ռուսաստանը 1993 թ. կուզենար Ղազախստանից գնել մոտ 6 մլն տոննա հացահատիկ, սակայն վերջնական թիվը հայտնի կդառնա հետագա բանակցություններից: Ռուսաստանն առայժմ չի կարող լիովին հրաժարվել հացահատիկի ներմուծումից, ասաց նա: ԻՖ

Բարենպաստ պայմաններ հանդիպման համար

Վրաստանի ղեկավար Էդուարդ Շեւարդնաձեն գտնում է, որ այժմ «ավելի բարենպաստ պայմաններ են ստեղծվել ռուս-վրացական բանակցությունները կանոնավոր հունով շարունակելու համար»: Նրա կարծիքով, դա պայմանավորված է նրանով, որ անհաջող է ավարտվել Սուխումի վրա հարձակումը, հաստատվել է Ռուսաստանի տարածական միջնաձայնությունը Վրաստանի ներքին գործերի մեջ, ինչի մասին է վկայում Սուխումի մոտակայքում խփված Ռուսաստանի օդուժի Սու-27 օդանավը: Բացի այդ, Վրաստանը պարզ, հստակ դիրքորոշում է դրսեւորել Ռուսաստանում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ: Է. Շեւարդնաձեն կարծիք հայտնեց, որ այժմ «լայնազանց բարենպաստ պայմաններ են ստեղծվել» Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինի հետ հանդիպման համար: Մեկնաբանելով հանգամանքի արդյունքները, նա հայտարարեց Բ. Ելցինի ծրագրին աջակցելու մասին: «Այսօր նրա իրականացումը ճգնաժամից դուրս գալու միակ ելքն է Ռուսաստանի համար», նշեց Վրաստանի ղեկավարը: ԻՖ

7 ամսում զոհվել են 109 եւ վիրավորվել 326 մարդ

Արդեն 7 ամսից ավելի շարունակվող Սուխումի գնդակոծումների հետեւանքով, որոնք իրականացնում են «գուդաուտցի ծայրահեղականները եւ նրանց հովանավորները», զոհվել է 109 մարդ, այդ թվում՝ 24 տուս, վիրավորվել 326 մարդ, այդ թվում՝ 61 տուս: Այս մասին ասվում է Թբիլիսիին ենթարկվող Աբխազիայի Նախարարների խորհրդի հայտարարության մեջ, որն ընդունվել է մասնավորապես ի պատասխան տուսական օդադեսանային զորքերի հրամանատարի տեղակալ, գեներալ-լեյտենանտ Ալեքսանդր Շինդարովի այն արտահայտության, թե Սուխումում ոչնչահարվում են տուսական բնակչության իրավունքները: ԻՖ

Մարզական

Գավաթակիրը սկսում է եւ հաղթում

Տեղի ունեցան ֆուտբոլի Հայաստանի Հանրապետության գավաթի 1/8 եզրափակիչ փուլի հանդիպումները:

Երեւանի «Արարատ»ը նախորդ փուլում 10:0 անսովոր հաշվով հաղթանակից հետո, այս անգամ «Կիլիկիա»ի հետ հանդիպման ժամանակ բավարարվեց մեկ գոլով. գնդակը խփեց «Արարատ»ի նորեկ Արթուր Քոչարյանը: Երեւանի ՀՄԸՄ-ն Արմավիրի «Հոբելյանական» մարզադաշտում նույնպես բավարարվեց նվազագույն հաղթանակով «Կանազ»ի նկատմամբ, միակ գոլի հեղինակը դարձավ Գեղամ Հովհաննիսյանը: Էջմիածնում մեծ հետաքրքրություն ներկայացնող «Ձվարթնոց»-«Շիրակ» հանդիպումն անցավ լարված եւ դրամատիկ պայքարում: Խաղասկզբում գյումրեցիներն առաջ անցնելով հաշվի մեջ (Սարգիս Կարապետյան, 15 րոպե) կարողացան մինչեւ վերջ դիմադրել դաշտի տերերի բուռն գրոհներին, իսկ խաղավարից երկու րոպե առաջ Աբրահամ Խաչմանյանին հաջողվեց կրկնապատկել հաշիվը:

ՀՄՄ-ՖԻՄՄ-«Ախթամար» հանդիպումն ավարտվեց 3:0 հաշվով հօգուտ դաշտի տերերի: Գնդակները խփեցին Ռոբերտ Սողոմոնյանը՝ երկու, Արմեն Կարապետյանը: «Քասախ»-«Վան» հանդիպումը հաղթանակ բերեց վերջիններիս՝ 1:5: Գնդակների հեղինակ դարձան Խանամիրյանը, Եվդոկիմովը, Ղալբաղչյանը, Տեր-Պետրոսյանը՝ երկու («Վան») եւ Գեւորգյանը («Քասախ»):

Հայաստանի անդրանիկ գավաթակիր «Բանանց» թիմը 1/16 եզրափակիչում «հանգստանալուց» հետո ներքաշվեց դայլարի մեջ, հանդիպելով Դիլիջանի «Իմպուլս»-ին: Խաղն անցավ Կոտայքի շրջանի ֆուտբոլիստների բացահայտ առավելությամբ եւ 8:1 հաշվով հաղթանակ բերեց նրանց: Գնդակները խփեցին Աշոտ Բարսեղյանը՝ չորս, Սամվել Կոստանդյանը, Արմեն Գալբուդաղյանը, Պողոս Թելյանը, Անդրանիկ Հովսեփյանը եւ Վահրամ Հովհաննիսյանը («Բանանց») սեփական դարպասը:

ԱՐԴԱՍԱՐԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

1/8 եզրափակիչի մյուս երկու հանդիպումները կանցկացվեն այսօր՝ «Նախիջեւան»-«Ցեմենտ», «Երազանք»-«Կոտայք»: Հիշեցնենք, որ խաղարկության հաջորդ փուլերում թիմերը միմյանց հետ կանցկացնեն երկուական հանդիպում սեփական եւ մրցակցի դաշտերում: Այդ հանդիպումները նախատեսված են անցկացնել՝ ապրիլի 6-ին եւ 21-ին: Հայտնի է, որ 1/4 եզրափակիչում կհանդիպեն «Վան»-«Բանանց» եւ «Շիրակ»-ՀՄՄ-ՖԻՄՄ թիմերը:

ԱՇՈՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Փրկվի՛ր, Կասպարով

Սոնակոյում շարունակվող շախմատի միջազգային ինքնաթիռ մրցաշարի 12 մասնակիցներից երկուսը գեղեցիկ սեռի ներկայացուցիչներ են, բայց երկուսն էլ տղամարդկանց մեջ գրոսմայստերներ են:

Խումը վերաբերում է Պոլգար Իլյարիին՝ ժուժային եւ Հունիթին: Հունիթ Պոլգարը 2:0 հաշվով հաղթել է աշխարհի նախկին չեմպիոն Անատոլի Կարպովին, որը վստահորեն գլխավորում էր մրցաշարային աղյուսակը: Շատերը դա ընդունեցին որպես գարնանային կատակ: Սակայն փաստն այն է, որ Հունիթը նախ սպիտակներով 30 քայլանոց դարաշայում առավելության է հասել ահեղ մրցակցի նկատմամբ, արդա սեւերով հաղթել է նաեւ մեծովի: Կարպովը մինչ այդ առանց տախտակի հետազոտությամբ իրար հետեւից հաշիվները մարել էր 4 մրցակիցների հետ:

Հունիթն արդեն դարձել է աշխարհի նախկին չեմպիոնների սարսափը: Նա, ինչպես գիտեք, նախ մրցաժամում հաղթեց Բորիս Սպասկուն, արդա Կարպովին, հիմա էլ մտածում է աշխարհի մյուս նախկին չեմպիոնի՝ Բոբի Ֆիշերի հետ հանդիպման մասին, իսկ հետո... Մնում է ասել՝ փրկվի՛ր, Կասպարով: Այսպանից հետո արդյոք կարելի՞ է զարմանալ, որ 10 ուժեղագույն տղամարդ գրոսմայստերների շրջապատում Հունիթ Պոլգարը դարձել է միանձնյա առաջատար: Նա 10 հնարավորից վաստակել է 7 միավոր:

Կարպովն ու Իվանչուկը հանդուգն աղջնակին զիջում են կեսական միավորով: Ամենուրդ չէ նշել, որ դարտի տակ չի մնում նաեւ ժուժան: Նա 5-րդ տուրում 1,5:0,5 հաշվով հաղթել է Վ. Կորչնոյին: ■

Ֆրանսիայում սպասում են Հայաստանի հավաքականին

Մեր թղթակից ԱՇՈՏՆ ԲՈՅԱՋՅԱՆԸ Փարիզից հաղորդում է.

Ֆրանսիայում անհամբերությամբ են սպասում բասկետբոլի կանանց ՀԴ հավաքականին: Թուլուզի միջազգային ավանդական 4-րդ մրցաշարից բացի նախատեսվում է 2 հանդիպում «Վալանսիեն-Օրշ» թիմի հետ, որը Ֆրանսիայի ուժեղագույն ակումբներից մեկն է եւ բարձրագույն խմբի առաջնություններում վերջերս դուրս էր եկել կիսաեզրափակիչ, որտեղ 2 հանդիպումներում զիջեց «Տարբ»-ին եւ 3-րդ տեղը վիճարկելու է «Սպաղ Քլերմոնտ»-ի հետ: Իսկ Ֆրանսիայի չեմպիոնի կոչումը եզրափակիչում վիճարկելու է «Շալե»-ն, որը վերջերս դարձավ եվրոպական երկրների չեմպիոնների գավաթի խաղարկության 3-րդ մրցանակակիր: «Շալե»-ն կիսաեզրափակիչի միայն լրացուցիչ 3-րդ խաղում 80:75 հաշվով առավելության հասավ «Սպաղ Քլերմոնտ»-ի նկատմամբ: Եզրափակիչ 1-ին հանդիպումն ապրիլի 3-ին կայանալու է Տարբում, իսկ դարասխան խաղն ապրիլի 9-ին Շալեում:

Թուլուզ ժամանելուց առաջ, ապրիլի 25-ին Քլերմոն-Ֆերանում Հայաստանի ընտրանին լրացուցիչ մեկ խաղ է անցկացնելու Ֆրանսիայի հավաքականի հետ, չնայած թիմերը հանդիպելու են հիմնական մրցաշարում: Ֆրանսիայի հավաքականն աշխարհի 8 լավագույնների մեջ է մտնում: Հայտնի դարձավ, որ Բարսելոնի օլիմպիադայի արծաթե մեդալակիր Շինասյանի հավաքականը չի կարող ժամանել Ֆրանսիա: Նրան փոխարինելու է մեկ այլ ուժեղ թիմ՝ Հարավային Կորեայի հավաքականը, որն անցյալ տարի նվաճել է Թուլուզի մրցաշարի գավաթը:

Ահա «Գաուն»-ի խաղացանկը. ապրիլի 27-ին Կորեա-Հայաստան, Լատվիա-Շվեդիա, ապրիլի 28-ին Ֆրանսիա-Շվեդիա, Լատվիա-Հայաստան, ապրիլի 29-ին Լատվիա-Կորեա, Հայաստան-Ֆրանսիա, ապրիլի 30-ին Ֆրանսիա-Լատվիա, Կորեա-Շվեդիա, մայիսի 1-ին Շվեդիա-Հայաստան, Ֆրանսիա-Կորեա: ■

Բարեկամ վարում է ԱՇՈՏՆ ԲՈՅԱՋՅԱՆԸ

ԽԱՂԱՑԱՆԿ
ՖՈՒՏԲՈԼԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՄԲԻ ԵՎ ԳԱՎԱԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ

6 ապրիլի (երեքշաբթի)
Գավաթի 1/4 եզրափակիչ

1-ին տուր
Ապրիլի 10 (շաբաթ), ժամը 16:00

1. ՀՄԸՄ (Երեւան)-«Իմպուլս» (Դիլիջան)
2. «Վան» (Երեւան)-«Կոտայք» (Աբովյան)

Ապրիլի 11 (կիրակի), 16:00

3. «Ցեմենտ» (Արարատ)-«Շիրակ» (Գյումրի)
4. «Բանանց» (Կոտայքի շրջ.)-«Սյունիք» (Կապան)
5. «Մալաթիա-Կիլիկիա» (Երեւան)-«Արարատ» (Երեւան)
6. «Քասախ» (Ալտարակ)-«Ձվարթնոց» (Էջմիածին)
7. «Երազանք» (Երեւան)-«Կանազ» (Երեւան)
8. «Նախիջեւան» (Երեւան)-ՀՄՄ-ՖԻՄՄ (Երեւան)

2-րդ տուր
Ապրիլի 15 (հինգշաբթի), 16:00

9. ՀՄԸՄ-«Սյունիք»
10. ՀՄՄ-ՖԻՄՄ-«Քասախ»

Ապրիլի 16 (ուրբաթ), 16:00

11. «Իմպուլս»-«Շիրակ»
12. «Բանանց»-«Մալաթ.-Կիլիկ.»
13. «Արարատ»-«Կոտայք»
14. «Կանազ»-«Վան»
15. «Ձվարթնոց»-«Երազանք»
16. «Ցեմենտ»-«Նախիջեւան»

21 ապրիլի (չորեքշաբթի), 16:00
Գավաթի 1/4 եզրափակիչ

3-րդ տուր
Ապրիլի 25 (կիրակի), 16:00

17. «Մալաթ.-Կիլիկ.»-ՀՄԸՄ

Ապրիլի 26 (երկուշաբթի), 16:00

18. «Շիրակ»-«Սյունիք»
19. «Կոտայք»-«Բանանց»
20. «Արարատ»-«Կանազ»
21. «Ձվարթնոց»-«Վան»
22. ՀՄՄ-ՖԻՄՄ-«Երազանք»
23. «Քասախ»-«Նախիջեւան»
24. «Ցեմենտ»-«Իմպուլս»

30 ապրիլի (ուրբաթ)
Գավաթի 1/2 եզրափակիչ

4-րդ տուր
Մայիսի 4 (երեքշաբթի), 17:00

25. «Շիրակ»-«Մալաթ.-Կիլիկ.»
26. ՀՄԸՄ-«Կոտայք»
27. «Վան»-ՀՄՄ-ՖԻՄՄ

Մայիսի 5, (չորեքշաբթի), 17:00

28. «Կանազ»-«Բանանց»
29. «Արարատ»-«Ձվարթնոց»
30. «Երազանք»-«Նախիջեւան»
31. «Քասախ»-«Ցեմենտ»
32. «Սյունիք»-«Իմպուլս»

Մայիսի 9 (կիրակի), Աբովյան
1992 թ. չեմպիոնների եզրափակիչ խաղ «Շիրակ»-ՀՄԸՄ

Մայիսի 10 (երկուշաբթի)
Գավաթի 1/2 եզրափակիչ

5-րդ տուր
Մայիսի 14 (ուրբաթ), 17:00

33. ՀՄՄ-ՖԻՄՄ-«Կոտայք»

Մայիսի 15 (շաբաթ), 17:00

34. «Շիրակ»-«Վան»
35. ՀՄԸՄ-«Արարատ»
36. «Բանանց»-«Ցեմենտ»
37. «Իմպուլս»-«Երազանք»
38. «Սյունիք»-«Քասախ»
39. «Նախիջեւան»-«Մալաթիա Կիլիկիա»
40. «Ձվարթնոց»-«Կանազ»

6-րդ տուր
Մայիսի 19 (չորեքշաբթի), 17:00

41. «Կանազ»-«Շիրակ»

Մայիսի 20 (հինգշաբթի), 17:00

42. «Ձվարթնոց»-ՀՄԸՄ
43. ՀՄՄ-ՖԻՄՄ-«Բանանց»
44. «Արարատ»-«Նախիջեւան»
45. «Ցեմենտ»-«Երազանք»
46. «Կոտայք»-«Իմպուլս»
47. «Քասախ»-«Վան»
48. «Սյունիք»-«Մալաթ.-Կիլիկ.»

Մայիսի 25 (երեքշաբթի), Երեւան «Հրազդան» մարզադաշտ
ՀՖ ֆուտբոլի գավաթի 1993 թ. եզրափակիչ խաղ

7-րդ տուր
Մայիսի 29 (շաբաթ), 18:00

49. ՀՄԸՄ-«Նախիջեւան»
50. «Վան»-«Ցեմենտ»
51. «Մալաթ.-Կիլիկ.»-«Կոտայք»

Մայիսի 30 (կիրակի), 18:00

52. «Շիրակ»-ՀՄՄ-ՖԻՄՄ
53. «Բանանց»-«Քասախ»
54. «Արարատ»-«Երազանք»
55. «Իմպուլս»-«Ձվարթնոց»
56. «Կանազ»-«Սյունիք»

8-րդ տուր
Հունիսի 4 (ուրբաթ), 18:00

57. «Քասախ»-«Շիրակ»
58. «Վան»-«Բանանց»
59. «Ցեմենտ»-«Արարատ»
60. «Իմպուլս»-«Նախիջեւան»
61. «Կոտայք»-«Կանազ»
62. «Ձվարթնոց»-«Մալաթ.-Կիլիկ.»

Հունիսի 5 (շաբաթ)

63. «Երազանք»-ՀՄԸՄ
64. ՀՄՄ-ՖԻՄՄ-«Սյունիք»

9-րդ տուր
Հունիսի 8 (երեքշաբթի), 18:00

65. «Մալաթ.-Կիլիկ.»-«Ցեմենտ»

Հունիսի 9 (չորեքշաբթի), 18:00

66. «Շիրակ»-«Ձվարթնոց»
67. ՀՄԸՄ-ՀՄՄ-ՖԻՄՄ
68. «Նախիջեւան»-«Բանանց»
69. «Քասախ»-«Արարատ»
70. «Երազանք»-«Վան»
71. «Իմպուլս»-«Կանազ»
72. «Կոտայք»-«Սյունիք»

10-րդ տուր
Հունիսի 13 (կիրակի), 18:00

73. «Կոտայք»-«Շիրակ»
74. «Կանազ»-ՀՄԸՄ

Հունիսի 14 (երկուշաբթի), 18:00

75. «Բանանց»-«Ձվարթնոց»
76. «Արարատ»-ՀՄՄ-ՖԻՄՄ
77. «Վան»-«Նախիջեւան»
78. «Երազանք»-«Քասախ»
79. «Սյունիք»-«Ցեմենտ»
80. «Իմպուլս»-«Մալաթ.-Կիլիկ.»

11-րդ տուր
Հունիսի 18 (ուրբաթ), 18:00

81. ՀՄԸՄ-«Վան»

Հունիսի 19 (շաբաթ), 18:00

82. «Շիրակ»-«Երազանք»
83. «Արարատ»-«Բանանց»
84. «Քասախ»-«Իմպուլս»
85. «Սյունիք»-«Նախիջեւան»
86. «Ձվարթնոց»-«Կոտայք»
87. «Ցեմենտ»-«Կանազ»

Հունիսի 20 (կիրակի), 18:00

88. «Մալաթ.-Կիլիկ.»-ՀՄՄ-ՖԻՄՄ

12-րդ տուր
Հունիսի 23-ին (չորեքշաբթի), 18:00

89. «Վան»-«Իմպուլս»

Հունիսի 24 (հինգշաբթի), 18:00

90. «Արարատ»-«Շիրակ»
91. «Բանանց»-ՀՄԸՄ
92. «Սյունիք»-«Երազանք»
93. «Քասախ»-«Մալաթ.-Կիլիկ.»
94. «Նախիջեւան»-«Կոտայք»
95. «Ցեմենտ»-«Ձվարթնոց»

Հունիսի 25 (ուրբաթ), 18:00

96. ՀՄՄ-ՖԻՄՄ-«Կանազ»

13-րդ տուր
Հունիսի 28-ին (երկուշաբթի), 19:00

97. «Նախիջեւան»-«Շիրակ»
98. «Ձվարթնոց»-«Սյունիք»

Հունիսի 29 (երեքշաբթի), 19:00

99. ՀՄԸՄ-«Քասախ»
100. «Երազանք»-«Բանանց»
101. «Վան»-«Արարատ»
102. «Իմպուլս»-ՀՄՄ-ՖԻՄՄ
103. «Կոտայք»-«Ցեմենտ»

Հունիսի 30 (չորեքշաբթի), 19:00

104. «Կանազ»-«Մալաթ.-Կիլիկ.»

14-րդ տուր
Հուլիսի 3 (շաբաթ), 19:00

105. «Վան»-«Սյունիք»
106. «Մալաթիա-Կիլիկիա»-«Երազանք»

Հուլիսի 4 (կիրակի), 19:00

107. «Բանանց»-«Շիրակ»
108. ՀՄԸՄ-«Ցեմենտ»
109. «Իմպուլս»-«Արարատ»
110. «Քասախ»-«Կոտայք»
111. «Նախիջեւան»-«Կանազ»
112. «Ձվարթնոց»-ՀՄՄ-ՖԻՄՄ

15-րդ տուր
Հուլիսի 8 (հինգշաբթի), 19:00

113. «Արարատ»-Սյունիք»
114. «Կանազ»-«Քասախ»

Հուլիսի 9 (ուրբաթ), 19:00

115. «Շիրակ»-ՀՄԸՄ
116. «Իմպուլս»-«Բանանց»
117. «Կոտայք»-«Երազանք»
118. «Մալաթիա-Կիլիկիա»-«Վան»
119. «Նախիջեւան»-«Ձվարթնոց»
120. «Ցեմենտ»-ՀՄՄ-ՖԻՄՄ

Պահեստային օրեր. օգոստոսի 20, 24, 28:

Ծանոթություն. Գավաթի եզրափակիչ խաղի պահեստային խաղադաշտն է Երեւանի «Նաիրի» մարզադաշտը: «Կանազ», ՀՄՄ-ՖԻՄՄ, «Վան» թիմերը իրենց խաղերը կանցկացնեն «Նաիրի» մարզադաշտում: «Երազանք»ը կխաղա Էջմիածնի քաղաքային մարզադաշտում:

digitised by A.R.A.R.@

Ֆրանսիա

ԷԴՈՒԱՐ ԲԱԼԱԴՅՈՒՐԸ «ԽՆԱՅՈՂ» ՎԱՐՉԱՊԵՏ

Թուրք մամուլը հիշում է նրա անցյալը

Ֆրանսիայի նոր վարչապետ դրն. Էդուար Բալադյուրը, մարտի 31-ին, կառավարության առաջին իսկ ժողովում ընդգծեց իր բծախնդրությունը տնտեսելու հարցում: Ընդունվեցին որոշումներ, ըստ որոնց, վարչապետարանի աշխատակազմը, որի ղեկավարն է ինքը, 20 տոկոս զեղչ ոյիտի կատարի իր առաջիկա ծախսերից, յուրահանչյուր նախարարություն՝ 10 տոկոս: Նախարարներին արգելված է գնել կամ փոխել ծառայողական մեքենաները, ինչը մինչեւ օրս հակառակն էր: Կառավարության 29 անդամներ, որոնց թիվը նախկինում 42-ն էր, հնարավորության սահմաններում պետք է ճամփորդեն սովորական ուղերթային օդանավերով, փոխանակ օգտագործելու ծառայողականները: Նախարարները 30 տոկոսով պետք է նվազեցնեն կառավարությունից առնելիք միջոցները սեփական գործունեությունը գովազդելու համար:

Էդուար Բալադյուրի նոցատակն է, ինչպես նա բանիցս է արտահայտվել, այս եւ առաջիկա այլ զիջումներով պետական բյուջեից խնայել մոտ 20 մլրդ ֆրանսիական ֆրանկ (4 մլրդ ամերիկյան դոլար): Վարչապետն անհանգստացած է Ֆրանսիայի ներկայիս տնտեսական ծանր վիճակով: Անգամ այնպիսի հոչակավոր հաստատություն, ինչպիսին աշխարհով մեկ տարածված Cre'dit Lyonnais-ն է, որ 60 հազար աշխատող ունի, անցյալ տարի 1,8 մլրդ ֆր. ֆրանկի բաց ունեցավ: Սրա հիմնական պատճառը ձեռնարկություններին տրված վարկերն էին, որոնք վերջիններս տնտեսական ճգնաժամի պատճառով չկարողացան վճարել: Հիշեցնենք, թե այս հսկա դրամատունը նախանցյալ տարի բացի փոխարեն 3.162 մլրդ շահույթ էր ստացել: Մյուս կողմից, կառավարության եւ վարչապետի առաջ ծառացած է մի այլ հրեշ՝ 3 մլն գործազուրկների բանակը, որն իրականում հասնում է 4.5 մլնի: Պրն. Բալադյուրը այս հարցում մշտական լուծումներ գտնելու նոցատակով պատրաստվում է ստեղծել հատուկ հանձնախումբ, որ ընդգրկվելու են ազգային եւ միջազգային չափանիշներով մասնագետներ:

Թուրքական «Հյուրրիյեթ» օրաթերթը իր ապրիլի 31-ի համարում «Օսմանցին Փարիզում» վերնագրությամբ հոդվածում գրում է, թե «Բալադյուրն իր ծնողներից ստացած կրթության շնորհիվ, որ զգացվում են նաեւ օսմանական ընտանիքի որոշ ազդեցություններ, դարձել է այլ տեսակի ֆրանսիացի, ավելի համեստ եւ երկխոսության համար բաց»: Թերթի նույն համարում սյունակագիր Հաթի Ուլուենջին Ֆրանսիայի նոր վարչապետի մասին իր գրությունում նշում է, թե «ըստ որոշ կարծիքների, նա օսմանյան կայսրության օրոք կաթոլիկություն ընդունած անկարացի մի հայ ընտանիքի զավակն է: Ուրիշներն ասում են, թե նա սերում է Ֆրանսիայի հարավի Բալադյուրներից»:

Իրոք, Էդուար Բալադյուրը հոր եւ դպրի կողմից հայկական ծագում ունի, իսկ մայրն ու մորենական տատը Պրովանսից են, Ֆրանսիայի հարավից: Բալադյուրները 1737 թ. արդում են Իզմիրում:

Սակայն «եթե մեկը չի սիրում իր հորենական ծագումը հիշել, իր իրավունքն է եւ անհրաժեշտություն չկա պնդելու այդ կետի վրա, գրում է Փարիզի «Յառաջ» հայերեն թերթը: Եթե ենթակաները բարդույթի կամ ինչ-ինչ պատճառներով չեն ուզեր հիշել դա, թող չուզեն, չհիշեն ու... վերջ»:

Իրոք, եթե մեկը չի ուզում, ինչո՞ւ անընդհատ կրկնել:

ՐԱՖՖԻ ՀԵՐՄՈՆ ԱՐԱԲՍ
Մեր սեփ. թղթակից, Փարիզ

Գաղթ

Ելցինն այսօր Վանկուվերում

Արժանահավատ աղբյուրների տվյալներով, Ռուսաստանի նախագահ Ելցինը լույս տարաբ գիշերը Կանադայի Վանկուվեր քաղաք է մեկնել ԱՄՆ-ի նախագահի հետ հանդիպում ունենալու համար: Հանդիպման նախնական ծրագիրը հետեւյալն է. ապրիլի 3-ին, տեղական ժամանակով 8.30-ին Ելցինը կհասնի Վանկուվեր, հանդիպում կունենա Կանադայի վարչապետ Բրայան Մալրունիի հետ, այնուհետեւ Բիլ Քլինթոնի հետ կբանակցի նեղ շրջանակում: Գագաթաժողովի առաջին օրը կավարտվի ի պատիվ Բ. Ելցինի ԱՄՆ-ի նախագահի անունից տրվող ճաշկերույթով: Երկրորդ օրվա հիմնական մասը կանցնի ընդլայնված կազմի բանակցություններով: Ենթադրվում է, որ ռուսական կողմից կմասնակցեն փոխվարչապետներ Ալեքսանդր Շոխինը եւ Բորիս Ֆյոդորովը, արտգործնախարար Անդրեյ Կոզիրեւը, ԱՄՆ-ում եւ Կանադայում Ռուսաստանի դեսպանները եւ նախագահի առաջին օգնական Վիկտոր Իլյուշինը: Նախատեսվում է նաեւ Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի նախագահների համատեղ մամուլի ասուլիս: ԻՖ

Հայտարարություն

«Աստղիկ» հայկական ֆիրման վաճառում է սեվարաթուղթ ՍԼՄ: Չափերը 80 սմ x 80 սմ: Նվազագույն քանակը՝ 500 հատ: 1 հատի արժեքը՝ 500 ռուբլի: Դիմել գրասենյակ:

☎ 27-30-28 կամ 22-53-77:

Լուրերի Հոսք

Ուցիեւ եղբայրների փողոց Գրոզնիում

Չեչնիայի մայրաքաղաք Գրոզնու կենտրոնական փողոցներից մեկը, որը կրում էր հաղթական պատերազմի հերոս Պավել Մուսորովի անունը, նախագահ Ջոխար Դուդաեւի հրամանագրով վերանվանվել է Ուցիեւ եղբայրների փողոց: Ինչպես նշվում է հրամանագրում, փողոցն այդպես է կոչվելու ի հիշատակ Ուցիեւ եղբայրների, որոնք վերջերս «Լոնդոնում ահաբեկչության զոհ դարձան պետական առաջադրանք կատարելիս»: ԻՖ

Ժիրինովսկին Սադդամի պատվո թիկնապահ

Լավատեղյակ աղբյուրների տվյալների համաձայն, Իրաքի ղեկավար Սադդամ Հուսեյնը կարգադրություն է սորագրել, որով Ռուսաստանի լիբերալ դեմոկրատական կուսակցության ղեկավար Վլադիմիր Ժիրինովսկուն նշանակել է իր պատվո թիկնապահ: Իրաքի ժողովրդի հանդեպ իր առանձնահատուկ ծառայությունների համար Ժիրինովսկուն կհանձնվի նաեւ «Ուզի» տիպի ավտոմատ ընձայագրով: Սնարք

Սողքը պատճառել է երկու միլիարդի վնաս

Ցգրտված տվյալներով, անցյալ տարաբ Սեավրոպոլը Ռոստով-Բաքու խողովակ՝ Հյուսիսային Կովկասի գլխավոր ավտոմայրուղուց կտրած սողքը վնասել է ճանապարհի մոտ 2 կիլոմետրանոց մի հատված, պատճառելով առնվազն 2 միլիարդ ռուբլու վնաս: Սնարք

Բարձրացվում են գնման գները

Ապրիլի 1-ից Ուկրաինայում միջինը 15,5 տոկոս բարձրացվում են գյուղատնտեսական արտադրանքի գնման գները: Այդ մասին մարտի 31-ին Ռովնոյում կայացած խորհրդակցությունում հաղորդեց հանրապետության վարչապետ Լեոնիդ Կուչման: Այժմ 1 լիտր կաթի դիմաց պետությունը կվճարի գյուղացիներին 82 կարբովանեց, 1 կգ խոզի մսի դիմաց՝ 577: 1 տոննա ցորենը կգնվի 50 հազար կարբովանեցով, երգիպտացորենը՝ 100 հազարով, սոյան՝ 200 հազարով: Կուչմայի խոսքերով, գները բարձրացվում են արդյունաբերության եւ գյուղատնտեսության արտադրանքի գների միջեւ հավասարության հասնելու համար: ԻՖ

Չեչնիայում վախենում են համաճարակներից

Չեչնիայի խորհրդարանը չորեքշաբթի օրն ստեղծել է հանրապետական արտակարգ համաճարակային հանձնաժողով: Դրա ղեկավար է նշանակվել Չեչնիայի Նախարարների կաբինետի փոխնախագահ Թայմուրազ Մուրդալովը: Ինչպես հաղորդում է Ինտերֆաքսի թղթակիցը, հանձնաժողովի ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված է համաճարակների վտանգով, քանի որ կոմունալ տնտեսության աշխատողների գործադուլի պատճառով արդեն մի քանի օր է, ինչ Գրոզնու եւ Չեչնիայի երջ կենտրոնների փողոցներից աղբ չի հավաքվում: ԻՖ

Բարեւ

Ռուսաստանում պոռնկության ծավալները անընդգրկելի

Պաշտոնական տվյալներով, Ռուսաստանում գործում է 1446 պոռնիկ, այդ թվում 602-ը Մոսկվայում: Նրանք հաշվառման մեջ են ներին գործերի մարմիններում: Այդ մասին հայտարարվեց հինգշաբթի օրը Ռուսաստանի ՆԳՆ բրիֆինգում:

Դրա հետ մեկտեղ բրիֆինգում խոստովանեցին, որ Ռուսաստանում պոռնկության իրական ծավալներն առայժմ անհայտ են: Պոռնիկների գերակշիռ մեծամասնությունն աշխատում է անլեգալ, ինքնուրույնաբար կամ զանազան ֆիրմաների «ցուցանակի ներքո»: Մոսկվայի քրեական հետախուզության վարչության պետ Յուրի Ֆեդոսեեւի խոսքերով, միայն Մոսկվայում նման հաստատությունների թիվը մոտ 200 է: Ամ այսօր դրանց տերերի եւ պոռնկապետների դեմ հարուցվել է միայն 14 քրեական գործ, որոնցից ոչ մեկը դատարանում չի քննվել:

Յու. Ֆեդոսեեւը հայտնեց, թե Մոսկվայի միլիցիան բացահայտել է կազմակերպիչներից եւ պոռնկապետներից կազմված 60-ից ավելի հանցախումբ եւ հաշվառման վերցրել 350 պոռնիկների: Հարցերին պատասխանելիս նա նշեց, որ մաֆիան առայժմ խիստ վերահսկողություն չի հաստատել գործունեության այդ ոլորտի նկատմամբ: ԻՖ

OK English OK

Հրավիրում ենք հետաքրքիր աշխատանքի Անգլերենի մասնագետների

(նաեւ լավ ուսանողների)
Ցանկալի է մինչեւ 35 տարեկան

հեռ. 27-38-64, 26-70-23, 34-79-38

«ՀԱՅԿԱԿԱՆ ՇՐԱԳՐԵՐ» ՍՊԸ

Գլխավոր գիրք. Բալանս
Դեբիտորների-կրեդիտորների հաշվառում
Աշխատավարձ
Հիմնական միջոցների հաշվառում
Բանկ-դրամարկղ
Պահեստ
Արտադրանքի իրացման հաշվառում
Մատակարարում
Ղեկավարի աշխատատեղ

Լավագույն հաշվապահական, ծրագրերը ԱՊՀ երկրներում:

Կշ-Սերվիս
25.47.58
25.24.63
63.64.06

PUBLISET

ԻՆԿՈ

«Ինկո» բաժնետիրական բանկի Հայաստանի մասնաճյուղը կատարում է արագ դրամական փոխանցումներ Դաշնակցային Ռուսաստանից Ուկրաինա, Հայաստանից Ուկրաինա եւ Ռուսաստանից Հայաստան: «Ինկո» բաժնետիրական բանկի Հայաստանի մասնաճյուղի հասցեն է՝

Երեւան-10, Վռամշապուհ արքայի (նախկին Ամիրյան փողոց) 2/8 (1-ին հարկ), հեռախոս 56-59-74, 56-07-51, 56-37-25:

PUBLISET

ԵՐԵՎԱՆ-ՓԱՐԻԶ-ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ
ԵՐԵՎԱՆ-ՓԱՐԻԶ-ՆՅՈՒ ՅՈՐՔ
Ամենահարմար գներով

ԵՐԵՎԱՆ. Սայաթ-Նովա 10 հեռ. 582-831, 567-208 LEVON TRAVEL

PUBLISET

«ԱՐՄԵՆԲԱՆԿ» Բ.Ա.Բ

Անշարժ գույքի եւ արժեթղթերի հայկական բորսայի
ՎԱԼՅՈՒՏԱՅԻՆ ԱՌ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ
գրասենյակը հրավիրում է բոլոր ցանկացողներին գնել, վաճառել կամ փոխանակել օտարերկրյա տարադրամը (ԱՄՆ դոլարներ, գերմանական մարկեր, ֆրանսիական ֆրանկներ, անգլիական ֆունտ ստեռլինգներ եւ այլն):

- ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ
- ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆ

Գրասենյակի հասցեն՝ Երեւան, Երվանդ Քոչարի փող. 17, «Արմենբանկ» (Կենտրոնական հանրախանութի եւ տեսուչ). հեռ. 55-02-15, 55-81-28

PUBLISET

Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխավոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841

Տնօրէն ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863

Apple® Macintosh® համակարգչային տարատեսակը «Ազգ» թերթի

Azg armenian daily

Editor H. AVEDIKIAN / phone: 521635

47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010

Թերթի ձեւավորման եւ տարատեսակների հեղինակ ՊԱՎԵԼ ԴԱԼԼԱԹՅԱՆ

Տպագրված է տպագրության՝ 2.4.1993

digitised by A.R.A.R.@